

ISSN 2738-2923

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



ՎԱՆԱԶՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Բնական և ճշգրիտ գիտություններ

1

ՎԱՆԱԶՈՐ – 2024

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՎԱՆԱԶՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Բնական և ճշգրիտ գիտություններ

1

ՎԱՆԱԶՈՐ – 2024

**МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ, НАУКИ,
КУЛЬТУРЫ И СПОРТА РА**

**ВАНАДЗОРСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИМЕНИ О. ТУМАНЯНА**

НАУЧНЫЕ ВЕДОМОСТИ

**ВАНАДЗОРСКОГО
ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА**

Естественные и точные науки

1

ВАНАДЗОР – 2024

**RA MINISTRY OF EDUCATION, SCIENCE,
CULTURE AND SPORT**

**VANADZOR STATE UNIVERSITY
AFTER H. TUMANYAN**

**SCIENTIFIC PROCEEDINGS OF
VANADZOR STATE UNIVERSITY**

Natural and Exact Sciences

1

VANADZOR – 2024

Տպագրվում է Վանաձորի Հ. Թումանյանի անվան
պետական համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհուրդ

Սահակյան Ռ. Ռ., տեխն. գ. դ. (խմբագրական խորհրդի նախագահ, գլխավոր
խմբագիր)

Հովսեփյան Վ. Վ., կ. գ. թ. (խմբագրական խորհրդի նախագահի տեղակալ)

Թովմասյան Մ. Հ., ֆ-մ. գ. թ. (պատասխանատու քարտուղար)

Խմբագրական խորհրդի անդամներ

Օսիպյան Լ. Լ., կ. գ. դ., ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

Ցիրլին Ա. Մ. տեխն. գ. դ.

Ժաբկո Ա. Պ., ֆ-մ. գ. դ.

Քամայան Ռ. Ջ., տեխն. գ. դ.

Կիպրուշկինա Ե. Ի., տեխն. գ. դ.

Հակոբյան Ռ. Ս., ֆ-մ. գ. դ.

Սուքիասյան Գ.Ս., տեխն. գ. դ.

Հունանյան Ս. Ա., գ. գ. դ.

Հարությունյան Լ. Ռ., ք. գ. դ.

Դալլաքյան Ռ. Վ., ֆ-մ. գ. դ.

Ղազարյան Հ. Ա., ք. գ. դ.

Վարդանյան Ջ. Ս., կ. գ. դ.

Թադևոսյան Գ. Պ., ա. գ. թ.

Ծատուրյան Ա. Մ., մ. գ. դ.

Կյուրեղյան Ա. Ս., ֆ-մ. գ. թ.

Ղազարյան Ա. Հ., ք. գ. թ.

Սամիկոնյան Հ. Ա., ֆ-մ. գ. թ.

Սայադյան Մ. Կ., մ. գ. թ.

Սաքանյան Մ. Ա., ֆ-մ. գ. թ.

Փարսադանյան Ս. Մ., ֆ-մ. գ. թ.

Օհանյան Հ. Հ., տեխն. գ. թ.

ՎԱՆԱՁՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

/ Բնական և ճշգրիտ գիտություններ, 1 // ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն, Վանաձորի պետական համալսարան/: Խմբ.
խորհուրդ՝ Ռ. Սահակյան և այլք. – Վանաձոր: 2024. –182 էջ:

Ժողովածուն ամփոփում է մաթեմատիկական, բնագիտական, տեխնիկա-
կան գիտությունների տարաբնույթ հարցերին վերաբերող գիտական և գիտամե-
թոդական հոդվածներ, որոնք խմբագրական խորհրդի անդամները գրախոսել,
խմբագրել և երաշխավորել են տպագրության:

ISSN 2738-2923

© Հեղինակային խումբ, 2024

© Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան, 2024

Печатается по решению ученого совета
Ванадзорского государственного университета имени О. Туманяна

Редакционный совет

Р. Р. Саакян, д. тех. н. (председатель редакционного совета, главный редактор)

В. В. Овсепян, к. б. н. (заместитель председателя редакционного совета)

М. А. Товмасян, к. физ.-мат. н. (ответственный секретарь)

Члены редакционного совета

Л. Л. Осипян, д. б. н., член-корр. НАН РА

А. М. Цирилин, д. тех. н.

А. П. Жабко, д. физ.-мат. н.

Р. З. Камалян, д. тех. н.

Е. И. Кипрушкина, д. тех. н.

Р. С. Акопян, д. физ.-мат. н.

Г. С. Сукиасян, д. тех. н.

С. А. Унанян, д. с./х. н.

Л. Р. Арутюнян, д. х. н.

Р. В. Даллакян, д. физ.-мат. н.

Г. А. Казарян, д. х. н.

З. С. Варданян, д. б. н.

Г. П. Тадевосян, к. г. н.

А. М. Цатурян, д. пед. н.

А. С. Кюрегян, к. физ.-мат. н.

А. Г. Казарян, к. х. н.

А. А. Мамиконян, к. физ.-мат. н.

М. К. Саядян, к. пед. н.

М. А. Саканян, к. физ.-мат. н.

С. М. Парсаданян, к. физ.-мат. н.

Э. Г. Оганян, к. тех. н.

НАУЧНЫЕ ВЕДОМОСТИ ВАНАДЗОРСКОГО ГОСУДАРСТВЕННОГО
УНИВЕРСИТЕТА / Естественные и точные науки, 1 // Министерство
образования, науки, культуры и спорта РА, Ванадзорский государственный
университет/. Ред. совет – Р. Саакян и др. – Ванадзор, 2024. – 182 с.

В сборнике представлены научные и научно-методические статьи, относящиеся
к различным вопросам математических, естественных, технических наук,
которые после рецензирования и редактирования были рекомендованы к печати
по решению редакционного совета.

ISSN 2738-2923 © Авторская группа, 2024

© Ванадзорский государственный университет имени О. Туманяна, 2024

Editorial Board

- R. R. Saakyan**, Doctor of Technical Sciences (Chairman of the Editorial Board,
Chief Editor)
V. V. Hovsepyan, Candidate of Biological Sciences (Deputy Chairman of the Editorial
Board)
M. H. Tovmasyan, Candidate of Physical and Mathematical Sciences (Secretary-in-Charge)

Editorial Board Members

- L. L. Osipyan**, Doctor of Biological Sciences, Member of NAS
A. M. Tsirilin, Doctor of Technical Sciences
A. P. Zhabko, Doctor of Physical and Mathematical Sciences
R. Z. Kamalyan, Doctor of Technical Sciences
E. I. Kiprushkina, Doctor of Technical Sciences
R. S. Hakobyan, Doctor of Physical and Mathematical Sciences
G. S. Sukiasyan, Doctor of Technical Sciences
S. A. Hunanyan, Doctor of Agricultural Sciences
L. R. Harutyunyan, Doctor of Chemical Sciences
R. V. Dallakyan, Doctor of Physical and Mathematical Sciences
H. A. Ghazaryan, Doctor of Chemical Sciences
Z. S. Vardanyan, Doctor of Biological Sciences
G. P. Tadevosyan, Candidate of Geographical Sciences
A. M. Tsureghyan, Doctor of Pedagogical Sciences
A. S. Kyureghyan, Candidate of Physical and Mathematical Sciences
A. H. Ghazaryan, Candidate of Chemical Sciences
H. A. Mamikonyan, Candidate of Physical and Mathematical Sciences
M. K. Sayadyan, Candidate of Pedagogical Sciences
M. A. Saqanyan, Candidate of Physical and Mathematical Sciences
S. M. Parsadanyan, Candidate of Physical and Mathematical Sciences
H. H. Ohanyan, Candidate of Technical Sciences

SCIENTIFIC PROCEEDINGS OF VANADZOR STATE UNIVERSITY / Natural
and Exact Sciences, 1 / RA Ministry of Education, Science, Culture and Sport,
Vanadzor State University/. Editorial Board: R. Saakyan, etc. – Vanadzor. 2024. –
182 p.

The collection summarizes various issues on Mathematical, Natural and Technical
Sciences, as well as the scientific, scientific and methodological articles, which have
been reviewed, edited and recommended for publication by the members of the
Editorial Board.

ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱ

ИНФОРМАТИКА

INFORMATICS

**Վարկային ռիսկի մոդելավորման համար գենետիկական
ալգորիթմների վրա հիմնված սինթետիկ տվյալների
գեներացման մեթոդ**

Գառնիկ Առաքելյան

DOI: <https://di.org/10.58726/27382923-ne2024.1-8>

*Հանգուցային բառեր. լոգիստիկ ռեգրեսիա, kNN, գենետիկական
ալգորիթմ, մուտացիա, տվյալների խմբավորում, կորելյացիա*

Նախաբան

Յուրաքանչյուր կազմակերպություն, այդ թվում նաև բանկերը և վարկային կազմակերպությունները, գործում են անկայուն միջավայրում և չունենալով այդ միջավայրի մասին ամբողջական տեղեկատվություն՝ կարող են կրել էական վնասներ: Այդպիսի կորուստների հիմնական աղբյուր է համարվում վարկային ռիսկը, որի կառավարման համար մշակվում են տարբեր մաթեմատիկական մոդելներ: Մակայն մոդելավորման ժամանակ հաճախ առաջանում են խնդիրներ, որոնք կապված են բավականաչափ դիտարկումների բացակայության հետ, և դրանք կարող են լուծվել ժամանակակից տեխնոլոգիաների միջոցով, մասնավորապես մեքենայական ուսուցման մեթոդներով:

Ներկայումս մեքենայական ուսուցման տեխնոլոգիաները ակտիվ կիրառվում են տարբեր խնդիրներ լուծելու համար: Օրինակ՝ 2019 թ. Google-ը ներկայացրել է Teachable Machine 2.0 տեխնոլոգիան, որը իրենից ներկայացնում է ինքնուրույն սովորող նեյրոնային ցանց, որը կարող է ճանաչել խոսք [11]: IBM-ն ունի Watson for Oncology [9], տեխնոլոգիա, որը մշակում է մեծ ծավալի բժշկական տվյալներ, ներառյալ պատկերները, քաղցկեղի ճշգրիտ ախտորոշման համար: Watson for Oncology ներկայումս կիրառվում է Նյու Յորքի, Բանգլոկի և Հնդկաստանի հիվանդանոցներում:

Կարելի է բերել նմանատիպ բազմաթիվ օրինակներ: Բանկերում և վարկային կազմակերպություններում մեքենայական ուսուցման տեխնոլոգիաները կարող են կիրառվել վարկային ռիսկի կառավարման համար: Նմանատիպ որակյալ մոդելներ ստեղծելու համար անհրաժեշտ են մեծ քանակությամբ տվյալներ: Հաճախ լինում են դեպքեր, երբ մոդելավորման համար բավականաչափ տվյալներ առկա չեն: Տվյալների հավաքագրումը հաճախ պահանջում է զգալի ֆինանսական ռեսուրսներ, ինչպես նաև այն

կարող է անհրաժեշտ լինել տարբեր պատճառներով, օրինակ՝ տեղեկատվական անվտանգության նկատառումներով:

Միջազգային պրակտիկայում մեքենայական ուսուցման մոդելի ստեղծման համար բավականաչափ տվյալների բացակայության դեպքում հաճախ կիրառում են սինթետիկ գեներացված տվյալները: Օրինակ՝ American Express-ը սինթետիկ տվյալների միջոցով մշակել է խարդախության հայտնաբերման մոդել [3]:

Սույն հետազոտության շրջանակում դիտարկվել են այլ հետազոտողների աշխատանքները: Աշխատանքում փորձ է կատարվել թվով փոքր քանակի իրական վարկային դիտարկումների հիման վրա գեներացնել սինթետիկ տվյալներ, որոնք կարող են օգտագործվել մեքենայական ուսուցման այնպիսի մոդելների ստեղծման համար, որոնք պահանջում են մեծ ծավալի տվյալների բազա: Մինթետիկ տվյալների գեներացման համար կիրառվել են գեներտիկական ալգորիթմի տրամաբանությունը, Դարվինի էվոլյուցիայի տեսության հայեցակարգը և մեքենայական ուսուցման մեթոդներ, որոնք մեծ քանակի տվյալներ չեն պահանջում: Ստացված տվյալների որակը գնահատվել է վիճակագրական մեթոդներով:

Ստացված արդյունքները գործնականում կիրառելի են և ցույց են տալիս, որ ցանկացած բանկ կամ վարկային կազմակերպություն կարող է մշակել վարկային ռիսկի կառավարման որակյալ լուծումներ նույնիսկ առկա փոքր քանակությամբ տվյալների առկայության դեպքում:

Գրականության ակնարկ: Հետազոտության շրջանակում ուսումնասիրվել են թեմային առնչվող տարբեր հոդվածներ, թեզեր և գրքեր: Դիտարկենք դրանցից մի քանիսը:

Մոսո Ֆոնսեկայի և Ֆերնանդո Բակաոյի կողմից գրված «Tabular and latent space synthetic data generation: a literature review» հոդվածում իրականացվել է սինթետիկ աղյուսակային տվյալների ստեղծման ալգորիթմների գրական վերլուծություն: Աշխատանքում ուսումնասիրվել են աղյուսակային տվյալների գեներացման 70 ալգորիթմներ, որոնք սովորաբար անտեսվում են [6]:

Մանհար Ուալիայի, Բրենդան Թիրնիի և Սյուզան ՄաքՔների հեղինակած «Synthesising Tabular Data using Wasserstein Conditional GANs with Gradient Penalty (WCGAN-GP)» հոդվածում դիտարկվում է Generative Adversarial Networks (GANs) մոդելների կիրառումը աղյուսակային տվյալների ստեղծման համար: Իրական տվյալներից չտարբերվող և առանց տվյալների կորուստի աղյուսակային սինթետիկ տվյալների գեներացման խնդիրը լուծելու համար կիրառվել է Wasserstein Conditional Generative

Adversarial Network (WCGAN-GP) մոդելը: Ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ սինթետիկ տվյալները պահպանում են իրական տվյալների մեջ առկա բաշխումները և հարաբերությունները [12]:

Բորիս վան Բրեյգելի, Ժամոթի Քյանի և Միհայելա վան դեր Շարի կողմից գրված «Synthetic Data, Real Errors: How (Not) to Publish and Use Synthetic Data» երկում ուսումնասիրվում է գեներատիվ գործընթացի ազդեցությունը մեքենայական ուսուցման հետագա խնդիրների վրա: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ իրականի նման սինթետիկ տվյալների կիրառումը հանգեցնում է հետագա մոդելների և վերլուծությունների ստեղծմանը, որոնք վատ են ընդհանրացնում իրական տվյալները: Մոդելների որակը բարձրացնելու համար հետազոտությունում կիրառվում է Deep Generative Ensemble (DGE) մեխանիզմը: DGE-ն բարելավում է հետագա մոդելներում ուսուցումը, քանակական գնահատման որակը [2]:

Խալեդ Էլ Էմամի, Լյուսի Մոսկերայի և Ռիչարդ Հոպտոնֆի հեղինակած «Practical Synthetic Data Generation» գրքում ներկայացված են սինթետիկ տվյալների ստեղծման տարբեր մեթոդներ՝ իրական տվյալների հիման վրա ստեղծված մտացածին տվյալներ: Գիրքը նկարագրում է սինթետիկ տվյալների ստեղծման քայլերը՝ օգտագործելով բազմաչափ նորմալ բաշխում, բաշխումներ ընտրելու մեթոդներ, տվյալների կառուցվածքի մոդելավորման մոտեցումներ, ինչպես նաև մեթոդներ և ցուցիչներ, որոնք կարող են օգտագործվել տվյալների օգտակարությունը գնահատելու համար [5]:

Ընդհանուր առմամբ, կարելի է եզրակացնել, որ սինթետիկ աղյուսակային տվյալների գեներացման հարցը հիմնականում մնում է չուսումնասիրված, մինչդեռ անհրաժեշտ է նշել, որ ներկայումս կատարվում են աշխատանքներ, ինչի արդյունքում մշակվում են սինթետիկ տվյալների գեներացման տարբեր տեսակի մոդելներ: Հարկ է նշել, որ այդ մոդելները հաճախ չեն բավարարում որոշ տեսակի զգայուն տվյալներ գեներացման համար, օրինակ՝ վարկերի վերաբերյալ տվյալների գեներացում: Այդ իսկ պատճառով հետազոտությունում փորձ է կատարվում ուսումնասիրել սինթետիկ աղյուսակային տվյալների բնույթը գենետիկական ալգորիթմների կիրառմամբ:

Հետազոտության մեթոդաբանություն: Սինթետիկ տվյալները իրենցից ներկայացնում են արհեստական ստեղծված տվյալներ, որոնք ընդօրինակում են իրական աշխարհի դիտարկումները և կիրառվում են մեքենայական ուսուցման մոդելների ուսուցման ժամանակ, երբ իրական տվյալների ստանալը բարդ է կամ թանկ: Սինթետիկ տվյալների գեներա-

ցումը թույլ է տալիս ստեղծել բոլորովին նոր տվյալներ, որոնք կունենան առկա իրական տվյալներին նման բնութագրեր: Այս պրոցեսի արդյունքում կարելի է գեներացնել ցանկացած քանակի տվյալներ, որոնք համարժեք են իրական տվյալներին և երևոյթներին:

Ըստ էության, սինթետիկ տվյալներ ստեղծելով, մենք վերստեղծում ենք մի բան, որը գոյություն ունի իրական աշխարհում՝ ֆիքսելով դրա բնութագրերը՝ առանց դրանք ուղղակիորեն պատկերելու:

Կախված իր կառուցվածքից՝ սինթետիկ տվյալները կարող են լինել մասնակի կամ ամբողջական: Մասնակի տեսակը պարունակում է ինչպես գեներացված սինթետիկ, այնպես էլ իրական արժեքներ, մինչդեռ ամբողջական տեսակը պարունակում է միայն գեներացված սինթետիկ արժեքներ [1]:

Սույն հետազոտության շրջանակում փորձ է կատարվել ստեղծել սինթետիկ տվյալների գեներացման մեթոդաբանություն՝ կիրառելով Դարվինի էվոլյուցիայի տեսության հայեցակարգը:

Կարևոր է նշել, որ գեներացված սինթետիկ տվյալները պետք է ունենան նույն վիճակագրական հատկությունները, ինչ իրական տվյալները:

Ներկայումս գոյություն ունեն սինթետիկ տվյալների գեներացման համար տարբեր գործիքներ: Մակայն այդ որոշ լուծումները ենթադրում են տվյալների ներբեռնումը web սերվեր, ինչը կարող է առաջացնել խնդիրներ անվտանգության հետ, իսկ մյուսները պահանջում են արդեն իսկ մեծ ծավալի տվյալների առկայություն:


Սույն հետազոտությունում առաջարկվում է սինթետիկ տվյալների գեներացման մեթոդ, որը բաղկացած է մի քանի հաջորդաբար կատարվող քայլերից: Նշենք, որ այս պարագայում դիտարկվում է բինար դասակարգման դեպքը, որը ենթադրում է վարկային ռիսկերի գնահատման և կառավարման մոդել ստեղծելու անհրաժեշտություն, որը կկարողանա կանխատեսել վարկառուի դեֆոլտի առկայությունը կամ բացակայությունը: Դիտարկենք այս քայլերը.

1. Առկա իրական տվյալների հիման վրա անհրաժեշտ է ստեղծել դասակարգման հեշտ մոդել, օրինակ՝ լոգիստիկ ռեգրեսիա կամ kNN: Այս ուսումնասիրության համատեքստում այս մոդելները պետք է կանխատեսեն վարկառուի դեֆոլտը՝ հիմնվելով այլ հատկանիշների վրա: Ենթադրվում է, որ առկա իրական տվյալների ծավալը բավարար է վերոնշյալ մոդելը ստեղծելու համար, սակայն դրանք բավարար չեն առավել բարդ մոդելներ կառուցելու համար, օրինակ՝ նեյրոնային ցանցեր:

2. Սինթետիկ տվյալների գեներացումը անհրաժեշտ է իրականացնել կախյալ փոփոխականի յուրաքանչյուր խմբի համար: Առկա իրական

տվյալներում կախյալ փոփոխականը հանդիսանում է վարկառուի դեֆոլտը, որը կարող է ընդունել երկու արժեք՝ 0 (իրադարձության բացակայություն) և 1 (իրադարձության առկայություն): Հետևաբար սինթետիկ տվյալների գեներացման համար առկա իրական տվյալները անհրաժեշտ է բաժանել երկու խմբի՝ մեկը պարունակում է դեֆոլտի իրադարձության բացակայող դիտարկումները, իսկ մյուսը՝ դեֆոլտի իրադարձության առկա դիտարկումները:


3. Դարվինի էվոյուցիայի տեսության սկզբունքների համաձայն՝ երկրորդ կետում նշված իրական տվյալների յուրաքանչյուր խումբը դիտարկվում է որպես պոպուլյացիա: Յուրաքանչյուր խմբի համար պատահականության սկզբունքով անհրաժեշտ է ընտրել երկու դիտարկում, որոնք կհանդիսանան ծնողներ իրենց հետնորդների համար, որոնք էլ հանդիսանում են սինթետիկ գեներացված տվյալներ: Էվոյուցիայի տեսության համաձայն՝ յուրաքանչյուր դիտարկում կհամարվի քրոմոսոմ, իսկ յուրաքանչյուր փոփոխական՝ գեն (նկար 1):




Նկար 1. Քրոմոսոմի կառուցվածք

Յուրաքանչյուր վերոնշյալ ընտրված գույգ դիտարկումների համար իրականացվում է ծնող քրոմոսոմների խաչաձև բեղմնավորումը հետնորդներ ստանալու համար: Նշենք, որ այստեղ կախյալ Y փոփոխականը չի դիտարկվում: Սույն մեթոդոլոգիայի շրջանակում հնարավոր է գեների ժառանգման երկու տարբերակ.

- Գեների ռեկոմբինացիա մեկ կետով, երբ հետազոտողը նախապես սահմանում է գեների այն տոկոսը, որը հետնորդը կժառանգի առաջին ծնողից, իսկ մյուս գեները՝ երկրորդ ծնողից (նկար 2):
- Գեների ռեկոմբինացիա երկու կետով, երբ հետազոտողը նախապես սահմանում է յուրաքանչյուր ռեկոմբինացիայի կետի գեների այն տոկոսը, որը հետնորդը կժառանգի առաջին ծնողից: Մյուս գեները ժառանգվելու են երկրորդ ծնողից (նկար 3):



Նկար 2. Գնների ռեկոմբինացիա մեկ կետով



Նկար 3. Գնների ռեկոմբինացիա երկու կետով

4. Ստացված հետնորդների շրջանակում իրականացվում է մուտացիա: Համաձայն սույն մեթոդի՝ մուտացիան իրենից ներկայացնում է ցածր հավանականությամբ ժառանգի քրոմոսոմում որևիցե գենի փոփոխություն: Մուտացիայի առաջացման առավելագույն հավանականությունը (x) որոշվում է էքսպերտային գնահատմամբ: Մուտացիայի ժամանակ գենը ընդունում է տվյալ փոփոխականի բոլոր արժեքների միջինը, որը կլորացվում է մինչև մոտակա ամբողջ թիվը: Տեղին է.

$$0 \leq P(M) \leq x$$

$$P(M) = \frac{x}{100} - \frac{x}{100 * n}$$

$$X_i = \frac{1}{n} \sum_{i=1}^n g_i$$

$g_i \in G$

որտեղ x ՝ X_i գենի մուտացիայի առաջացման առավելագույն հավանականությունն է, $P(M)$ ՝ մուտացիայի իրադարձության հավանականությունն է, G ՝ X_i գենի արժեքների բազմությունն է $\{g_1, g_2, \dots, g_n\}$, n ՝ հետնորդների քանակ:

5. Վերոնշյալ երրորդ և չորրորդ կետերը պետք է կրկնվեն այնքան անգամ, որքան անհրաժեշտ է ցանկալի քանակությամբ սինթետիկ տվյալներ ստանալու համար: Այսպիսով, եթե անհրաժեշտ է գեներացնել F ծավալի սինթետիկ տվյալներ, ապա գործընթացն ավարտելու պայմանը կլինի

$$\sum_{i=0}^n S_i - S_0 \geq F$$

որտեղ S_i ՝ գեներացված տվյալների քանակն է պրոցեսի ընթացքում, S_0 ՝ իրական տվյալների քանակն է, n ՝ պրոցեսի կրկնության քանակ, F ՝ տվյալների քանակ, որը անհրաժեշտ է գեներացնել:

6. Յուրաքանչյուր գեներացված տվյալների համար անհրաժեշտ է առաջին կետի ստեղծված մոդելի հիման վրա հաշվարկել կախյալ Y փոփոխականը:

7. Գեներացված սինթետիկ տվյալների որակը ստուգելու համար դրանք վիճակագրորեն տարբեր գործակիցների և թեստերի միջոցով համեմատվում են իրական տվյալների հետ:

Վերլուծություն: Հետազոտությունը իրականացվել է իրական վարկային տվյալների հիման վրա (3000 դիտարկում), ՀՀ տարածքում գործող Յունիբանկ ԲԲԸ-ի օրինակով: Առկա բազան բաղկացած է թվով 13 փոփոխականներից՝ վարկառուի տարիք վարկը վերցնելու պահին (20-ից մինչև 65 տարեկան), վարկառուի սեռ (իգական, արական), վարկառուի ամուսնական կարգավիճակ (միայնակ, ամուսնացած, բաժանված, այրի), վարկառուի կրթության աստիճան (գիտական աստիճան, բարձրագույն կրթություն, միջին մասնագիտական կրթություն, դպրոցական կրթություն), սեփականության առկայություն (անշարժ գույքի առկայություն, շարժական գույքի առկայություն, անշարժ և շարժական գույքերի առկայություն, սեփականության բացակայություն), պայմանագրային գումար (30,000-ից մինչև 1,336,000 ՀՀ դրամ), վերջին 12 ամիսների ընթացքում

ժամկետանց օրերի քանակ (0-ից մինչև 160), ուշացումների քանակ (0-ից մինչև 67), ռիսկի դասերի փոփոխությունների քանակ (0-ից մինչև 28), վարկային բեռ (0-ից մինչև 2,984,303 ՀՀ դրամ), վարկային պատմության երկարություն (0-ից մինչև 488 օր), առավելագույն մարած վարկ (0-ից մինչև 18,000,000 ՀՀ դրամ), դեֆոլտ (0 – ոչ, 1 – այո):

Ինչպես տվյալների վերլուծությունը, այնպես էլ սինթետիկ տվյալների գեներացումը իրականացվել է՝ համաձայն վերոնշյալ մեթոդաբանության՝ կիրառելով Excel ծրագիրը, Python ծրագրավորման լեզուն և դրա համապատասխան գրադարանները՝ Pandas, Matplotlib, Seaborn և Scikit-learn:

Իրական տվյալների որոշ թվային փոփոխականների նկարագրական վիճակագրությունը ներկայացված է ստորև (աղյուսակ 1): Աղյուսակից երևում է, որ բաց թողնված տվյալներ առկա չեն՝ բոլոր փոփոխականներում տվյալների քանակը 3000 հատ է:

Աղյուսակ 1

Նկարագրական վիճակագրություն

| Indicator | Վարկ. բեռ | Վարկ. պատմ. երկ. | Առավ. մարած վարկ | Պայմ. գումար |
|--------------|-----------|------------------|------------------|--------------|
| count | 3000 | 3000 | 3000 | 3000 |
| mean | 436443 | 58,8 | 338093 | 258077 |
| std | 507191 | 62,7 | 875317 | 145527 |
| min | - | - | - | 30000 |
| 25 % | - | 12 | - | 183800 |
| 50 % | 257514 | 38,5 | 150000 | 200000 |
| 75 % | 758630 | 84 | 360000 | 384850 |
| max | 2984303 | 488 | 18000000 | 1336000 |

Աղյուսակ 1-ից երևում է, որ վարկային բեռ, վարկային պատմության երկարություն, առավելագույն մարած վարկ և պայմանագրային գումար փոփոխականների համար ստանդարտ շեղումը բավականին բարձր է: Դա պայմանավորված է բանկի վարկային քաղաքականության հետ և այն փաստի հետ, որ տվյալներում առկա են տարբեր վարկային պատմություն ունեցող հաճախորդներ, օրինակ՝ մի հաճախորդը կարող է չունենալ վարկային պատմություն, իսկ մյուսը՝ ունի երկար վարկային պատմություն և մեծ ծավալի բեռ: Հաշվի առնելով առկա տվյալների հատկու-

թյունները՝ այլ փոփոխականների ստանդարտ շեղումը գտնվում է ընդունելի միջակայքում:

Վերլուծության ընթացքում կառուցվել է նաև կորելյացիոն մատրիցը (աղյուսակ 2), որտեղից երևում է, որ առկա է կապ «Ռիսկի դասերի փոփոխությունների քանակ» և «ուշացումների քանակ», «վարկային պատմության երկարություն» և «ուշացումների քանակ», «Ռիսկի դասերի փոփոխությունների քանակ» և «վերջին 12 ամիսների ընթացքում ժամկետանց օրերի քանակ», «ուշացումների քանակ» և «վերջին 12 ամիսների ընթացքում ժամկետանց օրերի քանակ» փոփոխականների միջև:

Աղյուսակ 2

**Կորելյացիոն վերլուծություն
(առավել ուժեղ կապ ունեցող փոփոխականների մասով)**

| | Վերջին 12 ամ. ընթ. ժամ. օր. քանակ | Ուշացումների քանակ |
|----------------------------------|--|---------------------------|
| Ուշացումների քանակ | 0,35 | 1,00 |
| Ռիսկի դասերի փոփոխ. քանակ | 0,39 | 0,61 |
| Վարկ. պատմ. երկ. | 0,11 | 0,45 |

Նկարագրական վիճակագրության և կորելյացիոն վերլուծության դիտարկումից հետո իրականացվել է սինթետիկ տվյալների գեներացումը: Դրա համար, համաձայն վերոնշյալ մեթոդաբանության առաջին կետի՝ իրական տվյալների հիման վրա կառուցվել են լոգիստիկ ռեգրեսիայի և kNN մոդելները Scikit-learn գրադարանի միջոցով, և այդ մոդելներից ընտրվել է լավագույնը:

Մոդելները կառուցելու համար տվյալները խմբավորվել են, քանի որ տվյալների նախնական մշակումը և խմբավորումը կարող են բարելավել մեքենայական ուսուցման մոդելի որակը [7]: Խմբավորված տվյալները ստանդարտացվել են՝ օգտագործելով Weight of Evidence (WOE) մեթոդը [4]: Յուրաքանչյուր խմբի համար WOE-ն հաշվարկվում է հետևյալ բանաձևով

$$WOE = \ln \frac{\text{Percentage of good in the class}}{\text{Percentage of bad in the class}}$$

որտեղ ln-ը բնական լոգարիթմն է [8]:

Աղյուսակ 3-ում և 4-ում ներկայացված են իրական տվյալների խմբավորումները և ստանդարտացման արդյունքները:

3,000 իրական տվյալների խմբավորում և ստանդարտացում

| Խումբ | Գումար (հազ. դրամ) | WOE |
|---|--------------------|--------|
| Սեռ | | |
| Իգական | 401,760 | 0,222 |
| Արական | 372,471 | -0,236 |
| Կրթություն | | |
| Գիտական աստիճան | 88,819 | -0,172 |
| Բարձրագույն | 185,635 | 0,058 |
| Միջին մասնագիտական | 498,783 | 0,007 |
| Միջնակարգ | 994 | 1,309 |
| Ամուսնական կարգավիճակ | | |
| Բաժանված | 11,594 | 1,419 |
| Ամուսնացած | 603,498 | 0,055 |
| Միայնակ | 15,157 | -0,130 |
| Այրի | 143,982 | -0,310 |
| Ուշացումների քանակ | | |
| 1. 0 | 327,328 | 0,335 |
| 2. 1 | 446,903 | -0,241 |
| Վարկային բեռ | | |
| 1. 0 | 229,977 | 2,281 |
| 2. 1-300,000 | 138,009 | -0,143 |
| 3. 300,001+ | 406,245 | -0,865 |
| Պայմանագրային գումար | | |
| 1. Մինչև 200,000 | 333,626 | 0,402 |
| 2. 200,001-400,000 | 269,056 | -0,091 |
| 3. 400,001+ | 171 549 | -0,630 |
| Վերջին 12 ամիսների ընթացքում ժամկետանց օրերի քանակ | | |
| 1. 0-30 | 761,429 | 0,036 |
| 2. 31+ | 12,802 | 0,000 |

| Խումբ | Գումար (հազ. դրամ) | WOE |
|--|--------------------|--------|
| Մեփականության առկայություն | | |
| Անշարժ գույքի առկայություն | 42,343 | -0,040 |
| Շարժական գույքի առկայություն | 180,294 | 0,057 |
| Անշարժ և շարժական գույքի առկայություն | 37,095 | -0,136 |
| Բացակայություն | 514,499 | -0,007 |
| Տարիք | | |
| 1. 20-25 | 123,702 | -0,220 |
| 2. 26-35 | 242,899 | -0,143 |
| 3. 36-50 | 251,022 | 0,117 |
| 4. 51+ | 156,608 | 0,211 |
| Ռիսկի դասերի փոփոխությունների քանակ | | |
| 1. 0 | 652,277 | -0,097 |
| 2. 2+ | 121,954 | 0,540 |
| Վարկային պատմության երկարություն | | |
| 1. 0-270 | 763,328 | 0,002 |
| 2. 271-365 | 7,778 | -0,258 |
| 3. 366+ | 3,124 | 0,132 |
| Առավելագույն մարած վարկ | | |
| 1. 0-350,000 | 544,095 | 0,115 |
| 2. 350,001+ | 230,136 | -0,269 |

Սույն հետազոտությունում մոդելավորման համար որպես անկախ փոփոխականներ ընդունվում են աղյուսակ 2-ում հաշվարկված WOE արժեքները յուրաքանչյուր խմբի համար, իսկ որպես կախյալ փոփոխական, որը անհրաժեշտ է կանխատեսել՝ «Դեֆոլտ» փոփոխականը, որը կարող է ընդունել 0 (իրադարձության բացակայություն) և 1 (իրադարձության առկայություն) արժեքները:

Աշխատանքի ընթացքում կիրառվել է cross-validation գործիքը, որը թույլ է տալիս շրջանցել մոդելների գերուսուցման խնդիրը, իսկ մոդելների լավագույն պարամետրերը ընտրելու համար կիրառվել է GridSearchCV գործիքը: Լոգիստիկ ռեգրեսիայի համար որպես հիպերպա-

բամետրեր ընդունվել են «penalty» (L1 և L2 կանոնավորացում) և «C» (կանոնավորացման հակադարձ ուժը), իսկ kNN մոդելի համար՝ «n_neighbours» (հարևանների քանակ 1-ից մինչև 10) and «P» (հզորության պարամետր Մինկովսկու չափման համար: Երբ p=1, մոդելը հեռավորությունը հաշվարկելու համար օգտագործում է Մանհեթենի հեռավորությունը, իսկ երբ p=2՝ Էվկլիդեսյան հեռավորությունը):

Մոդելավորման համար տվյալները բաժանվել են 2 խմբի՝ ուսուցման համար նախատեսված խումբ (x_train, y_train) և թեստավորման համար նախատեսված խումբ (x_test, y_test) համապատասխանաբար 65 % և 35 % հարաբերակցությամբ: Մոդելները ուսուցվել են և լոգիստիկ ռեգրեսիայի համար որպես լավագույն պարամետրեր ընդունվել են «penalty» – L2 և «C» – 1000, իսկ kNN մոդելի համար՝ «n_neighbours» – 7 և «P» – 1:

Վերոնշյալ պարամետրերով ստեղծված մոդելները պահպանվել են, և այդ մոդելների համար հաշվարկվել են Scikit-learnscore մեթոդով որակական ցուցանիշը: Այն իրենից ներկայացնում է մոդելի որակը նկարագրող հասարակ մետրիկա, որը ցույց է տալիս ճիշտ գուշակածների մասնաբաժինը: Այսպիսով լոգիստիկ ռեգրեսիայի համար այդ ցուցանիշը, որը հաշվարկվել է՝ հիմք ընդունելով ուսուցման համար նախատեսված բազան, կազմել է 78,5 %, իսկ թեստի համար նախատեսված բազային հիման վրա՝ 80,8 %: KNN մոդելի համար այդ ցուցանիշը, որը հաշվարկվել է՝ հիմք ընդունելով ուսուցման համար նախատեսված բազան, կազմել է 84,1 %, իսկ թեստի համար նախատեսված բազային հիման վրա՝ 79,2 %:

Թեստային տվյալների հիման վրա հաշվարկվել են նաև Precision և Recall գործակիցները [10], որոնք ցույց են տալիս մոդելի որակը: Այնուհետև յուրաքանչյուր մոդելի համար հաշվարկվել է F1 մետրիկան, որը գաղափարապես միավորում է վերը նշված ցուցանիշների տեղեկատվությունը (աղյուսակ 4): Ստորև բերված են նշված մետրիկաների հաշվարկման բանաձևերը.

$$Precision = \frac{TP}{TP + FP},$$

$$Recall = \frac{TP}{TP + FN},$$

$$F1 = \frac{2 * Precision * Recall}{Precision + Recall},$$

որտեղ TP (True positive)՝ ճիշտ կանխատեսված դիտարկումների թիվն է, FP (False positive)՝ սխալ դրական կանխատեսված դիտարկումների թիվն

է, FN (False negative)՝ սխալ բացասական կանխատեսված դիտարկումների թիվն է:


Աղյուսակ 4

Թեստային տվյալների հիման վրա հաշվարկված որակական մետրիկաները


| Մոդել | Թեստային տվյալներ | |
|---------------------|-------------------|------|
| | F1 Score | AUC |
| Logistic regression | 0.79 | 0.86 |
| kNN | 0.76 | 0.89 |

Յուրաքանչյուր մոդելի համար կառուցվել է ROC կորերը: Այն իրենից ներկայացնում է գրաֆիկ, որը թույլ է տալիս գնահատել դասակարգչի (մոդելի) որակը՝ ցույց տալով ճիշտ դասակարգված և սխալ դասակարգված օբյեկտների հարաբերակցությունը (նկար 4, 5): ROC-ի քանակական մեկնաբանությունը ցույց է տալիս AUC (Area under Curve) գործակիցը: Որքան AUC-ը մեծ է, այնքան մոդելի որակը բարձր է (սակայն բարձր արժեքը կարող է գերուսուցման նշան լինել): Եթե AUC-ը 0,5 է, ապա մոդելը որակապես վատն է, իսկ 0,5-ից ցածր արժեքը ցույց է տալիս, որ դասակարգիչը ճիշտ հակառակն է կանխատեսում:

Կատարված աշխատանքի արդյունքում, համաձայն աղյուսակ 5-ի, մշակված մոդելներից լավագույնն է ճանաչվում kNN մոդելը, քանի որ այն կարողանում է առավել ճշգրիտ բացահայտել դեֆոլտ գնացած հաճախորդներին:





Նկար 4. Լոգիստիկ ռեգրեսիայի մոդելի ROC կոր





Նկար 5. kNN ռեգրեսիայի մոդելի ROC կոր

Վերոնշյալ մեթոդաբանության համաձայն՝ 1-ին քայլից հետո 2-5 քայլերը իրականացվել են՝ համաձայն մշակված Python սկրիպտի: 3,000 իրական տվյալների հիման վրա գեներացվել են 100,000 սինթետիկ տվյալներ: Յուրաքանչյուր սինթետիկ գեներացված դիտարկման համար «Դեֆոլտ» կախյալ փոփոխականը կանխատեսվել է 1-ին կետում մշակված և ընտրված որպես լավագույն՝ kNN մոդելի միջոցով:



Գեներացված կատեգորիալ փոփոխականները գնահատվել են իրական և գեներացված տվյալների համապատասխան խմբերում կշիռների համեմատման միջոցով: Համեմատությունը իրականացվել է առանձին՝ համապատասխանաբար դեֆոլտի բացակայության և առկայության հիման վրա: Համեմատելով ստացված տվյալները՝ կարելի է պնդել, որ գեներացված կատեգորիալ փոփոխականները համապատասխանում են իրական տվյալներին (նկար 6, 7, 8, 9-ում):





Նկար 6. Իրական և գեներացված տվյալների համեմատություն «Անուսնական կարգավիճակ» փոփոխականի համար



Նկար 7. «Կրթություն» փոփոխականի իրական և գեներացված տվյալների համեմատություն



Նկար 8. «Սեփականության առկայություն» փոփոխականի իրական և գեներացված տվյալների համեմատություն



Նկար 9. Բրական և գեներացված տվյալների համեմատություն «Մեռ» փոփոխականի համար

Գեներացված թվային փոփոխականները գնահատվել են t-վիճակագրության միջոցով: Ստացված արդյունքները ներկայացվել են աղյուսակ 5-ում, ինչի արդյունքում կարելի է նշել, որ բոլոր գեներացված փոփոխականները համապատասխանում են իրական տվյալներին, բացառությամբ «Վարկային բեռ» փոփոխականի: Այդ փոփոխականը կարող է տարբերվել մուտացիայի գործոնի առկայության պատճառով, քանի որ այդ փոփոխականի արժեքները գտնվում են 0-ից մինչև 2,984,303 ՀՀ դրամ միջակայքում:

T-վիճակագրության արդյունքներ

| Փոփոխական | Statistic | Pvalue |
|--|---------------|-------------|
| Տարիք | 0,856516785 | 0,391713985 |
| Վերջին 12 ամիսների ընթացքում ժամկետանց օրերի քանակ | (0,681300611) | 0,495682828 |
| Ուշացումների քանակ | (0,527846142) | 0,597607265 |
| Ռիսկի դասերի փոփոխությունների քանակ | 0,732714716 | 0,463734114 |
| Վարկային բեռ | (3,497259066) | 0,000470263 |
| Վարկային պատմության երկարություն | (0,467802758) | 0,639926638 |
| Առավելագույն մարած վարկ | (0,466592493) | 0,640792446 |
| Պայմանագրային գումար | (1,167098726) | 0,243173204 |

Եզրակացություններ: Բանկերը և վարկային կազմակերպությունները կարող են կրել զգալի կորուստներ, քանի որ դրանք գործում են անկայուն միջավայրում, որի մասին ամբողջական տեղեկատվություն առկա չէ: Վարկային ռիսկը հանդիսանում է այն հիմնական ռիսկերից, որոնց հետ առնչվում են ֆինանսական ինստիտուտները: Բանկերի և վարկային կազմակերպությունների համար կարևոր է հստակ գիտակցել այս ռիսկի ճանաչման, գնահատման, վերահսկման և կառավարման կարևորությունը:

Վարկային ռիսկի կառավարումը կարևոր տեղ է զբաղեցնում ֆինանսաբանկային համակարգում: Այդ ռիսկը նվազեցնելու համար անհրաժեշտ է ներդնել որոշումների կայացման հուսալի համակարգ: Այդ նպատակով ստեղծվում են տարբեր մաթեմատիկական մոդելներ: Մոդելավորման ժամանակ հետազոտողները հաճախ բախվում են խնդիրների՝ բավարար դիտարկումների բացակայության պատճառով:

Սույն աշխատանքի շրջանակում վերոնշյալ խնդիրը լուծելու համար մշակվել է փոքր քանակի իրական տվյալների հիման վրա մեթոդաբանություն, որը թույլ է տալիս գեներացնել սինթետիկ տվյալներ:

Ստացված արդյունքները գործնականում կիրառելի են և ցույց են տալիս, որ ցանկացած բանկ կամ վարկային կազմակերպություն կարող է մշակել վարկային ռիսկի կառավարման հուսալի համակարգ նույնիսկ փոքր քանակի տվյալների հիման վրա:

DOI: <https://di.org/10.58726/27382923-ne2024.1-8>

Գրականություն

1. AltexSoft, Synthetic Data for Machine Learning: Its Nature, Types, and Means of Generation, AltexSoft software r&d engineering, 22.03.2022, <https://www.altexsoft.com/blog/synthetic-data-generation/>(Date of last access 21.02.2024)
2. Breugel B., Qian Z., Schaar M. Synthetic Data, Real Errors: How (Not) to Publish and Use Synthetic Data. PMLR., 2023, <https://proceedings.mlr.press/v202/van-breugel23a/van-breugel23a.pdf> (Date of last access 21.02.2024)
3. Castellanos S. Fake it to Make it: Companies Beef up AI Models with Synthetic Data. WSJ PRO., 23.07.2021, <https://www.wsj.com/articles/fake-it-to-make-it-companies-beef-up-ai-models-with-synthetic-data-11627032601>(Date of last access 27.02.2024)
4. Chakraborty A. Information Value (IV) — how to use it in EDA and Model Building? Medium, 05.09.2021 <https://medium.com/mllearning-ai/weight-of-evidence-woe-and-information-value-iv-how-to-use-it-in-eda-and-model-building-3b3b98efe0e8> (Date of last access 18.02.2024)
5. Emam K., Mosquera L., Hoptroff R. Practical Synthetic Data Generation. O'Reilly Media, Inc., 2020, p. 175.
6. Fonseca J., Bacao F. Tabular and latent space synthetic data generation: a literature review. Springer Open., 10.07.2023, <https://journalofbigdata.springeropen.com/articles/10.1186/s40537-023-00792-7>(Date of last access 27.02.2024)
7. Geeks for Geeks, Binning in Data Mining, Geeks for Geeks, 11.01.2023, <https://www.geeksforgeeks.org/binning-in-data-mining/>(Date of last access 18.02.2024)
8. Ghazaryan A., Grigoryan L., Arakelyan G. Implementation of Machine Learning in the Credit Risk Management System of Individuals. Messenger of ASUE, 5(71), 2022, pp. 123-138.
9. IBM, 5725-W51 IBM Watson for Oncology, IBM, 01.08.2023, <https://www.ibm.com/docs/en/announcements/watson-oncology?region=CAN> (Date of last access 27.02.2024)
10. Mattman Ch., Machine Learning with Tensor Flow, Manning Publications Co., 2020, p. 456
11. Phillips K. Teachable Machine 2.0 makes AI easier for Everyone, 07.11.2019, <https://blog.google/technology/ai/teachable-machine/>(Date of last access 01.03.2024)

12. Walia M., Tierney B., McKeever S. Synthesising Tabular Data using Wasserstein Conditional GANs with Gradient Penalty (WCGAN-GP). CEUR Workshop Proceedings, 18.12.2020, https://ceur-ws.org/Vol-2771/AICS2020_paper_57.pdf (Date of last access 21.02.2024)

Метод генерации синтетических данных на основе генетических алгоритмов для моделирования кредитного риска

Гарник Аракелян

Резюме

Ключевые слова: логистическая регрессия, *kNN*, генетический алгоритм, мутация, группировка данных, корреляция

Любая компания, в том числе банки и кредитные организации, осуществляют свою деятельность в нестабильной среде и не имея о ней полной информации, могут понести значительные убытки. Одним из основных источников подобных убытков является кредитный риск, для управления которого создаются различные математические модели. Однако при моделировании часто возникают проблемы, связанные с отсутствием необходимого количества наблюдений.

В рамках темы исследования были изучены работы других исследователей. В рамках данной работы предпринята попытка создания синтетических данных на основе имеющихся в малом количестве реальных наблюдений о кредитах, которые могут быть использованы для создания моделей машинного обучения, которые требуют наличие большого набора данных.

Для генерации синтетических данных была использована логика генетических алгоритмов, концепции теории эволюции Дарвина, а также методы машинного обучения, не требующие наличие большого количества данных. Качество сгенерированных данных было оценено статистическими методами.

Полученные результаты практически применимы и показывают, что любой банк или кредитная организация может разработать качественное решение для управления кредитными рисками даже при наличии имеющихся в малом количестве данных.

A Method for Generating Synthetic Data based on Genetic Algorithms for Modeling Credit Risk

Garnik Arakelyan

Summary

Key words: *logistic regression, kNN, genetic algorithm, mutation, data grouping, correlation*

Any company, including banks and credit organizations, operates in an unstable environment and may incur significant losses without having complete information about it. One of the main sources of such losses is credit risk, for the management of which various mathematical models are created. However, modeling often faces challenges related to the lack of a sufficient number of observations.

Within the research topic, studies by other researchers have been examined. In this work, an attempt was made to create synthetic data based on a small number of real credit observations, which can be used to create machine learning models that require a large dataset.

To generate synthetic data, the logic of genetic algorithms, the concepts of Darwin's theory of evolution, as well as machine learning methods that do not require a large amount of data were used. The quality of the generated data was assessed using statistical methods.

The results obtained are practically applicable and demonstrate that any bank or credit organization can develop a high-quality solution for managing credit risks even with a small amount of available data.

Ներկայացվել է 28.02.2024 թ.

Գրախոսվել է 02.04.2024 թ.

Ընդունվել է տպագրության 30.05.2024 թ.

ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

БИОЛОГИЯ

BIOLOGY

Մանդակարգի ազդեցությունը ուսանողների ֆիզիոլոգիական և առողջական ցուցանիշների վրա

*Հասմիկ Գրիգորյան
Արմենուհի Հարությունյան
Արևիկ Բաբեյան*

DOI: <https://di.org/10.58726/27382923-ne2024.1-31>

Հանգուցային բառեր. *սննդակարգ, բալանսավորված սնունդ, սնման առանձնահատկություններ, ճարպակալում, թերսնում, մարմնի զանգվածի ինդեքս /ՄՁԻ/, իդեալական զանգված*

Ներածություն. Օրգանիզմի առողջական վիճակը որոշող ամենակարևոր գործոններից մեկը բալանսավորված սննդակարգն է: Վիճակագրության համաձայն՝ մարդու առողջությունը կախված է 50-55 %-ով ապրելակերպից, 20 %-ով՝ շրջակա միջավայրից, 18-20 %-ով՝ գենետիկ նախատրամադրվածությունից, միայն 8-10 %-ով՝ առողջապահությունից: Ուստի մարդու բնականոն կենսագործունեության համար հարկավոր է բոլոր անհրաժեշտ նյութերով հավասարակշռված սննդամթերք [15]:

Աշխատանքի արդիականությունը: Բալանսավորված սննդակարգի նորմերից ցանկացած շեղում հանգեցնում է օրգանիզմի բնականոն աշխատանքի խաթարման և, որպես հետևանք, տարբեր հիվանդությունների զարգացման: Հատկապես մեր ժամանակներում թափ են առել «քաղաքակրթության հիվանդությունները», ինչպիսիք են ճարպակալումը, հիպերտոնիան, սրտի իշեմիկ հիվանդությունը, քաղցկեղը, ալերգիաները և շաքարային դիաբետը, որոնք հիմնականում առաջանում են անհավասարակշռված սնուցման արդյունքում [11]: Հայտնի միջազգային “The Lancet” պարբերականում վերջերս հրապարակված նյութի համաձայն՝ աշխարհում այժմ 1 միլիարդից ավելի մարդ ապրում է «ճարպակալում» ախտորոշմամբ: Ճարպակալումը կարող է հանգեցնել 2-րդ տիպի շաքարային դիաբետի, սրտանոթային համակարգի հիվանդությունների ռիսկի մեծացման, կարող է ազդել հենաշարժական և վերարտադրողական համակարգերի վրա, մեծացնել քաղցկեղի որոշ տեսակների ռիսկը, ազդել կյանքի որակի և քնի ռեժիմի վրա [12]: Ճարպակալումը նվազեցնում է կյանքի տևողությունը միջինը 3-5 տարով՝ չափավոր ավելորդ քաշի դեպքում և մինչև 15 տարով՝ արտահայտված ճարպակալման դեպքում: Հայտնի է, որ բոլոր դեպքերի 98 %-ում ավելորդ քաշի պատճառ է հանդի-

սանում գերսնուցումը [6]: Այն արդիական է հատկապես ուսանողների և նստակյաց աշխատանք ունեցող մարդկանց համար: Ժամանակի սղության պատճառով ուսանողները չեն կարողանում պահպանել պատշաճ և ժամանակին սննդի ընդունումը: Հիպոդինամիան (նստակյաց ապրելակերպը) թերսնման հետ միասին բացասաբար է անդրադառնում օրգանիզմի և նրա վիճակի վրա [4]: Բացի այդ՝ պետք է հաշվի առնել, որ կյանքի այդ շրջանում տեղի է ունենում օրգանիզմի բոլոր ֆիզիոլոգիական համակարգերի վերջնական ձևավորումը:

Բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների համար սննդակարգի որակի և կառուցվածքի խնդիրները շատ արդիական են: Միևնույն ժամանակ աճում է արագ սննդի սպառումը, որը պարունակում է մեծ քանակությամբ տարբեր ներկանյութեր, համային հավելումներ և մոդիֆիկացված բաղադրիչներ:

Ժամանակակից գիտությունը ապացուցում է, որ փոխելով սննդակարգի բնույթը և ռեժիմը՝ կարելի է դրականորեն ազդել մարդու օրգանիզմի բոլոր համակարգերի և գործընթացների վրա, բարձրացնել խունիտետը, կենսունակությունը, ազդել բազմաթիվ հիվանդությունների վրա, դանդաղեցնել ծերացման գործընթացը և այլն [3]: Հայտնի է, որ որոշ սննդային խմբեր պետք է համակցված ներառել սննդակարգում՝ օրգանիզմին անհրաժեշտ բոլոր նուտրեանտների պահանջը բավարարելու համար: Առաջին ուտեստի՝ ապուրների նշանակությունը սննդակարգում հսկայական է, քանի որ այն հարուստ է բանջարեղենով, հացահատիկով, մսամթերքով, սնկով և այլն [16]: Մսամթերքը կարևոր է մարդու սննդի մեջ՝ որպես սպիտակուցի, երկաթի, ցինկի, B վիտամինների, այդ թվում՝ վիտամին B₁₂-ի աղբյուր [9]: Բանջարեղենն ու մրգերը կարևոր նշանակություն ունեն մարդու սննդի մեջ՝ որպես սննդային մանրաթելերի, բետտա-կարոտինի, ֆոլաթթվի, վիտամինների, կալիումի, ջրի և այլ նյութերի աղբյուր [9]: Կաթնաշաքարը (լակտոզա), որը պարունակվում է կաթնամթերքի մեջ, նորմալացնում է աղիքային միկրոֆլորայի վիճակը, սահմանափակում է աղիներում խմորման և փտման գործընթացները, բարելավում է կալցիումի և վիտամին B₂-ի կլանումը [5, 9]: Ձկների ճարպի մեջ կան օմեգա-3 ընտանիքի բազմաթիվ հատուկ պոլիչ-հագեցած ճարպաթթուներ, որոնք չեն հայտնաբերվել ցամաքային կենդանիների ճարպերում [9]: Իսկ հրուշակեղենը, կոնֆետները և շոկոլադը պարունակում են մեծ քանակությամբ ճարպ կամ շաքար կամ հաճախ երկուսն էլ, ուստի դրանք հակված են լինել շատ աղքատ հիմնական սննդանյութերով [9]:

Աշխատանքի նպատակը և խնդիրները: Աշխատանքի նպատակն է

ուսումնասիրել Վանաձորի պետական համալսարանի ուսանողների սնման առանձնահատկությունները և ռեժիմը, սնման ռացիոնի ազդեցությունը ուսանողների օրգանիզմի, առողջական ցուցանիշների վրա, ուսանողների սննդակարգում սննդանյութերի հավասարակշռության օպտիմալ քանակությունը և սննդային վարքագիծը:

Նյութը և մեթոդը: Ուսումնասիրության օբյեկտը ՎՊՀ-ի ուսանողներն են, իսկ հետազոտության առարկան՝ ՎՊՀ-ի ուսանողների սննդակարգը:


Հետազոտության համար կիրառվել են անկետային, անթրոպոմետրիկ, Կետլեի ինդեքսի (ՄՁԻ) որոշման մեթոդները, արյան հեմոգլոբինի քանակի որոշման Մալլի մեթոդը, հիմնական փոխանակության որոշման Հարիս-Բենեդիկտի մեթոդը, մարմնի իդեալական զանգվածի որոշման Բրոկայի մեթոդը [1; 2; 5; 7; 8; 13; 17; 18]:

Արդյունքները և վերլուծությունը:

Անկետավորման մեթոդով կատարված հարցման վերլուծություն:


Հետազոտությանը կամավորության սկզբունքով մասնակցել է 105 ուսանող՝ 85 իգական սեռի ներկայացուցիչներ, որը կազմում է մասնակիցների ընդհանուր թվի 81 %-ը և 20 արական սեռի ներկայացուցիչներ, որը կազմում է մասնակիցների ընդհանուր թվի 19 %-ը:

Հետազոտությանը մասնակցող ուսանողների միջին տարիքային սահմանը 22 է: Մտորև՝ գծապատկեր 1-ում, բերված է յուրաքանչյուր տարիքային խմբի տոկոսային հարաբերակցությունը:



Գծապատկեր 1. Հետազոտության մասնակիցների տարիքային շեմը


Ուսանողների միայն 8,6 %-ի մոտ է օրական սնման հաճախությունը կազմում 3-4 անգամ, որը համարվում է ֆիզիոլոգիապես օպտիմալ: Համաձայն ստացված տվյալների՝ ուսանողների մեծամասնությունը սնվում է օրական 2-3 անգամ, իսկ 12,4 %-ը՝ 1 անգամ (գծապատկեր 2):



Գծապատկեր 2. Հետազոտության մասնակիցների սնման օրական հաճախախտության սխեմատիկ պատկերը

Հարցմանը մասնակցած ուսանողների միայն 13,3 %-ն է սնվում ամեն օր նույն ժամերին: Մնացած 86,7 %-ի սնման ռեժիմը հաստատուն չէ:


Նյութափոխանակության պրոցեսների ակտիվությունը առավելագույնն է առավոտյան ժամերին (որպես կանոն՝ առավոտյան 7-ից 10-ին) [5, 19]: Սննդակարգում նախաճաշի առկայության վերլուծությունը ցույց է տվել, որ հարցմանը մասնակցած ուսանողների կեսից ավելին՝ 50,5 %-ը, չի նախաճաշում (գծապատկեր 3):



Գծապատկեր 3. Նախաճաշի ընդունման տոկոսային հարաբերությունը


Ըստ հետազոտության տվյալների՝ 52,4 % ուսանողների սննդակարգում բացակայում է առաջին ուտեստը, իսկ 47,6 %-ի սննդակարգում վերջինս առկա է:

Հետազոտության արդյունքում պարզ դարձավ, որ ուսանողների 53,3 %-ը ռացիոնում պարբերաբար օգտագործում է մսամթերք, իսկ 5,7 %-ը ընդհանրապես չի օգտագործում (գծապատկեր 4):




Գծապատկեր 4. Ուսանողների կողմից մասնաճյուղի օգտագործման հաճախությունը

Ժամանակակից երիտասարդների սննդակարգում մեծ տեղ է գրավում արագ սնունդը, որը պարունակում է մեծ քանակությամբ տարբեր ներկանյութեր, հավելումներ և մոդիֆիկացված բաղադրիչներ: Համաձայն հարցման տվյալների ուսանողների 46,7 %-ը պարբերաբար օգտագործում է արագ սնունդ և միայն 18,1 %-ը ընդհանրապես չի օգտվում արագ սննդից (գծապատկեր 5):




Գծապատկեր 5. Ուսանողների կողմից արագ սննդի օգտագործման հաճախությունը

Վերլուծվել է նաև սննդային այնպիսի խմբերի օգտագործումը, ինչպիսիք են բանջարեղենը և մրգերը: Գծապատկեր 6-ից երևում է, որ վերջիններս ուսանողների զգալի մասի (72,4 %) սննդակարգի պարտադիր բաղադրիչ են: Ստացված տվյալներից կարելի է եզրակացնել, որ ժամանակակից կենսակերպում ուսանողները փորձում են ավելի շատ օգտագործել միրգ և բանջարեղեն:




Գծապատկեր 6. Ուսանողների կողմից բանջարեղենի և մրգերի օգտագործման հաճախությունը

Հետազոտման արդյունքում ստացված տվյալները ցույց են տալիս, որ կաթն ու կաթնամթերքը (պանիր, կաթնաշոռ, թթվասեր, յոգուրտներ և այլն) ուսանողների 14,3 %-ի սննդակարգում իսպառ բացակայում են, իսկ 54,3 %-ը պարբերաբար օգտագործում է կաթնամթերք (գծապատկեր 7):




Գծապատկեր 7. Ուսանողների կողմից կաթնամթերքի օգտագործման հաճախությունը

Հարցվածների պահանջը ձկան և ծովամթերքի նկատմամբ խիստ տարբեր է: Հարցման արդյունքում ստացված տվյալների համաձայն՝ ուսանողների 29,5 %-ը ընդհանրապես չի օգտագործում ձուկ և ծովամթերք, 35,2 %-ը՝ ամիսը 1-2 անգամ, 18,1 %-ը՝ շաբաթական 1-2 անգամ, և միայն 17,1 %-ը՝ պարբերաբար (գծապատկեր 8):



Գծապատկեր 8. Ուսանողների կողմից ձկան և ծովալթերքի օգտագործման հաճախությունը

Հարցմանը մասնակցած ուսանողների մեծամասնության ռացիոնը (72,4 %-ը) ամեն օր ներառում է քաղցրավենիք, և ոչ ոք այն չի բացառում իր սննդակարգից (գծապատկեր 9): Ընդ որում, հարցվածների 26,7 %-ը թեյին կամ սուրճին ավելացնում է 3 կամ ավելի գդալ շաքարավազ, իսկ 38,1 %-ը՝ 1-2 գդալ շաքարավազ:



Գծապատկեր 9. Ուսանողների կողմից քաղցրավենիքի օգտագործման հաճախությունը


Ոչ պարտադիր պատասխանով հարցման արդյունքում պարզ դարձավ, որ հարցմանը մասնակցած ուսանողներից մեկ հոգու մոտ առկա է ձեռքբերովի շաքարային դիաբետ. ուսանողների 99,05 %-ը չունի ձեռքբերովի շաքարային դիաբետ:

Հետազոտության արդյունքում ստացված տվյալների վերլուծությունը վկայում է նաև ջրային հաշվեկշռի խախտման մասին: Հեղուկի նորման (միջինում 1,5-2 լ/օր) սպառում է ուսանողների միայն 54,3 %-ը: Մնացած հարցվածները օրական 1,5 լիտրից քիչ ջուր են օգտագործում, ինչը չի

համապատասխանում առողջ սննդակարգի սկզբունքներին [9]:

Հարցմանը արդյունքում պարզվեց, որ ուսանողների 42,9 %-ը սնունդը կուլ է տալիս առանց ծամելու, ինչը կարող է հանգեցնել մարսողության խանգարումների և որպես հետևանք՝ սննդանյութերի չմարսման [9]:

Ախորժակը արտացոլում է օրգանիզմի ներսում տեղի ունեցող կենսաբանական իրադարձությունների և արտաքին աշխարհի շրջապատող միջավայրի իրադարձությունների սերտ փոխազդեցությունը: Մարդու ախորժակի հիմքում ընկած մեխանիզմների գնահատման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել նաև վարքի գիտակցված և միտումնավոր (արտաքին) վերահսկողությունը [6, 10]: Հարցմանը մասնակցած ուսանողների միայն 57,1 %-ն է սնվում կանոնավոր՝ ըստ օրգանիզմի ֆիզիոլոգիական անհրաժեշտության, այսինքն՝ երբ քաղցի զգացում է ունենում, 42,9 %-ը սնվում է անկանոն: Ուսանողների 10,5 %-ը հաճախ գերսնվում է, իսկ 53,4 %-ը՝ երբեմն: Հարցին՝ «Երբևիցե փորձել եք արդյոք դիետաներ (օրինակ՝ բացառել որևէ սննդի տեսակ կամ սնվել միայն մեկ տեսակի սնունդով)» ուսանողների 39 %-ը տվել է դրական պատասխան: Հարցվածների 28,6 %-ին անհանգստացնում է իր մարմնի զանգվածը, և առաջանում է ավելորդ քաշ ձեռք բերելու վախ (զծապատկեր 10):



Չծապատկեր 1. Ուսանողների կողմից քաշի հետ կապված անհանգստությունը և ավելորդ քաշ ձեռք բերելու վախը ներկայացնող գրաֆիկ

Հայտնի է, որ սնվելու մղումը կարող է կապված լինել սննդի «հազեցման ուժի» հետ: «Հազեցման ուժը» կամ «հազեցման արդյունավետությունը» վերաբերում է սպառված սննդամթերքի կարողությանը՝ սովը ճնշելուն և սնվելու հաջորդ շրջանի սկիզբը արգելակելուն: Այս գործընթացը ակտիվանում է սննդի ազդեցությամբ հոգեբանական և կենսաքի-

միական մեխանիզմներով: Ախորժակի վերահսկման համակարգի խանգարումները կարող են պայմանավորված լինել ինչպես ֆիզիոլոգիական ազդակների կամ նյարդաքիմիական միջնորդանյութերի խանգարումների, այնպես էլ արտաքին գործոնների չափավոր կամ ընդգծված ազդեցությունների հետ [10]:

Այն հարցին, թե ուսանողները արդյո՞ք դադարեցնում են սնվելը, երբ հազեցման զգացողություն են ունենում, հարցվածների 25,7 %-ը պատասխանել է «Ոչ, միշտ ուտում եմ ավսեիս ողջ պարունակությունը»:

Կետլեի ինդեքսի որոշում և վերլուծում: Անթրոպոմետրիկ մեթոդի հիման վրա ստացված տվյալների համաձայն կատարվել է ուսանողների մարմնի զանգվածի ինդեքսի որոշում (ՄՁԻ)՝ համաձայն Կետլեի բանաձևի: ԱՀԿ-ի առաջարկությունների համաձայն՝ մշակվել է ՄՁԻ-ի ցուցանիշների հետևյալ ստանդարտը [13] (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

**Մարմնի զանգվածի ինդեքսի ստանդարտները
18-22 տարեկանների համար**

| Մարմնի զանգվածի ինդեքս (կգ/մ ²) | Մարդու քաշի և հասակի համապատասխանությունը |
|---|---|
| 16 կամ պակաս | Արտահայտված ծանր թերքաշ |
| 16-18,5 | Մարմնի քաշի անբավարարություն (դեֆիցիտ) |
| 18,5-25 | մարմնի իդեալական զանգված |
| 25-30 | Ավելորդ քաշ (նախաճարպակալում) |
| 30-35 | 1 աստիճանի ճարպակալում |
| 35-40 | 2 աստիճանի ճարպակալում |
| 40 և ավելի | 3 աստիճանի ճարպակալում |

Ըստ բանաձևի՝ 58 կգ զանգվածով և 1,75 մ հասակով ուսանողի Կետլեի ինդեքսը հավասար է.

$$I = \frac{58}{(1,75)^2} = 19,94 \text{ կգ/մ}^2:$$

Տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ, ըստ աղյուսակ 2-ի ստանդարտների, ուսանողների 19,57 %-ի մոտ կա ՄՁԻ-ի նորմայից շեղում, ընդ որում 13,04 %-ի մոտ նկատվում է մարմնի քաշի անբավարարություն, իսկ 9,5 %-ի մոտ՝ ավելորդ քաշ: Ուսանողների 80 %-ի մոտ ՄՁԻ-ն նորմայի սահմանում է:


Բդեալական զանգվածի որոշում Բրոկայի մեթոդով և վերլուծում:
 Անթրոպոմետրիկ մեթոդի կիրառմամբ ստացված տվյալների համաձայն կատարվել է ուսանողների մարմնի իդեալական զանգվածի որոշում Բրոկայի մեթոդով՝ 2 եղանակով: Դիցուք՝ 180 սմ հասակով և 80 կգ զանգվածով ուսանողի իդեալական զանգվածը հավասար է.

(1) Բդեալական զանգվածը = $180 - 110 = 70$ կգ:

(2) Բդեալական զանգվածը = $(180 - 100) \cdot 0,9 = 72$ կգ:

Բդեալական զանգվածի միջին արժեքը կլինի $(70 + 72) / 2 = 71$ կգ:

Համաձայն ստացված տվյալների վերլուծության՝ ստացվել է հետևյալ պատկերը (գծապատկեր 12).



Գծապատկեր 12. Ուսանողների մարմնի զանգվածի և իդեալական զանգվածի համեմատում

Որոշվել է նաև ուսանողների մարմնի զանգվածի շեղումը իդեալական զանգվածից: Օրինակ՝ 92 կգ իրական զանգվածով և 71 կգ իդեալական զանգվածի արժեքով ուսանողի մարմնի զանգվածի շեղումը իդեալական զանգվածից հավասար է.

$$\text{Չանգվածի շեղումն իդեալական զանգվածից} = \frac{71 - 92}{71} \cdot 100\% = -29,6\%$$

ինչը խոսում է առաջին աստիճանի ճարպակալման մասին:

Ըստ ստացված տվյալների՝ ուսանողների 10,9 %-ի մոտ նկատվում է ավելորդ քաշ, իսկ 14,2 %-ի մոտ՝ քաշի անբավարարություն:

Արյան հեմոգլոբինի քանակի որոշում և վերլուծում: Հետազոտության արդյունքում գունաչափական մեթոդով որոշվել է ուսանողների

Երբեմն անհամատեղելի և անկախ պատահույթները նույնացվում են: Ուսուցիչը պետք է ուշադրություն դարձնի այն փաստի վրա, որ պատահույթները անհամատեղելի են այն դեպքում, երբ դրանք չեն կարող միաժամանակ տեղի ունենալ միևնույն փորձի ժամանակ, և անկախ են այն դեպքում, երբ դրանցից մեկի տեղի ունենալու հավանականությունը չի փոխվում մյուսի տեղի ունենալու դեպքում:

Մովորողների մոտ դժվարություն չի առաջացնում նաև հավանականությունների գումարման և բազմապատկման կանոնների կիրառումը: Դիտարկենք ասվածը ցուցադրող օրինակներ:

Օրինակ 1: Զամբյուղում գտնվում են երեք կապույտ, չորս սպիտակ և հինգ կարմիր գնդակ: Ինչի՞ է հավասար հավանականությունն այն բանի, որ զամբյուղից պատահականորեն հանված գնդակը կլինի գունավոր:

Լուծում: Ակնհայտ է, որ գունավոր գնդակ հանել նշանակում է հանել կապույտ կամ կարմիր գնդակ: Կապույտ գնդակ դուրս գալու հավանականությունը հավասար է $\frac{3}{12}$, իսկ կարմիր գնդակ դուրս գալունը՝ $\frac{5}{12}$, հետևաբար գունավոր գնդակի դուրս գալու հավանականությունը (ըստ

հավանականությունների գումարման թեորեմի) հավասար է $\frac{3}{12} + \frac{5}{12} = \frac{8}{12}$:

Օրինակ 2: «Արարատ» բառը կազմող տառերով քարտերը լավ խառնում են, ապա հերթականությամբ հանում չորս քարտ և շարքով դասավորվում: Բնչպիսի՞ն է «արար» բառը ստանալու հավանականությունը:

Լուծում: Առաջինը «ա» տառը հանելու հավանականությունը հավասար է $\frac{3}{6}$ -ի: Երկրորդը «ր» տառը հանելու հավանականությունը հավասար է $\frac{2}{5}$ -ի: Երրորդը «ա» տառը հանելու հավանականությունը հավասար է $\frac{2}{4}$ -ի: Վերջինը «ր» տառը հանելու հավանականությունը հավասար է $\frac{1}{3}$ -ի: Ըստ հավանականությունների բազմապատկման թեորեմի՝ «արար» բառը ստանալու հավանականությունը հավասար կլինի $\frac{1}{3} \cdot \frac{3}{6} \cdot \frac{2}{4} \cdot \frac{2}{5} = \frac{1}{30}$ -ի:

Ցանկացած խնդրի նկատմամբ հետաքրքրության առաջացնելու համար անհրաժեշտ է, որպեսզի դրա բովանդակությունը լինի տեսանելի, հակիրճ, մատչելի և հետաքրքիր, ինչի արդյունքում կբարձրանա հետաքրքրությունը ինչպես մաթեմատիկայի, այնպես էլ դասավանդվող առարկայի նկատմամբ, և կաճի դասավանդվող նյութի յուրացման արդյունավետությունը: Ընդ որում պետք է հիշել, որ նյութի ձևակերպումը պետք է համապատասխանի սովորողների հնարավորություններին և պատրաստվածության մակարդակին: Եթե աշակերտի առջև դրվի խնդիր, որը նա ի վիճակի չէ լուծել, ապա դա նրա մոտ կարող է լարվածություն առաջացնել:

Հավանականությունների տեսության խնդիրների լուծումը տեղի է ունենում որոշակի հավանականային մոդելում, բայց միշտ չէ, որ այդ մոդելը դասական է: Այդ պատճառով միշտ չէ, որ հավանականություն հաշվելու խնդրի լուծման միջոց են հանդիսանում կոմբինատորային հասկացությունները և բանաձևերը: Բազմաթիվ խնդիրների միջոցով կարելի է ցույց տալ, թե ինչպես հիմնավորել, որ պատահական փորձերի մոդելը դասական է և ինչ անել հակառակ դեպքում: Փորձերի հավանականային մոդելների կառուցման ժամանակ փաստարկման միջոցների ընտրությունը մաթեմատիկական գործունեության ձև է:

Սովորողները պետք է կարողանան որոնել անհայտ մոդելի մասին տեղեկատվության աղբյուրներ և այդ աղբյուրներից որոնել տեղեկատվության ձեռքբերման միջոցներ: Ենթադրենք, որ խնդրի մեջ պահանջվում է կառուցել հինգ մետաղադրամի նետման հավանականական մոդելը: Եթե աշակերտը չունի այս կառույցի համար անհրաժեշտ համապատասխան կոմբինատորային գիտելիքներ, ապա մենք կարող ենք դիմել վիճակագրական տվյալների օգնությանը և կազմակերպել այդ տվյալների հա-

վաքումն այնպես, որ դրանք լինեն անհայտ մոդելի մասին տեղեկատվության հավաստի աղբյուր: Վարքի այսպիսի ռացիոնալացումը ևս պետք է դասել մաթեմատիկական գործունեության ձևերին:

Վերը կատարված վերլուծության հիման վրա մենք առանձնացնում ենք հավանականային մտածողության հետևյալ բաղադրիչները.

1. Տրամաբանական. հավանականային մտածողության ձևավորման գործընթացը հետազոտողների մեծ մասը կապում է մարդկային գործունեության բազմաթիվ ոլորտներում տեղի ունեցող հավանականային երևույթների էության ճանաչման, մտավոր գործողությունների (վերլուծություն, համադրում, ընդհանրացում, համեմատում, դասակարգում) շնորհիվ դրանց օրինաչափությունների բացահայտման, հավանականային գիտելիքների գիտակցված օգտագործման, սեփական մասնագիտական գործունեության ընթացքում ինքնուրույն արդյունավետ լուծման կայացման հետ): Դրա հետ կապված հավանականային խնդիրների լուծման ժամանակ սովորողների մոտ ձևավորվում են տրամաբանական մտածողության հիմնական հնարները, ինչպիսիք են համեմատումը (առարկաների մոտ ընդհանուրի և տարբերվողի առանձնացում), վերլուծությունը (օբյեկտի տարբեր հատկությունների և հատկանիշների առանձնացում և խոսքային նշանակում) և ընդհանրացումը (շեղում օբյեկտի ոչ էական հատկանիշներից և դրանց միավորում էական ընդհանրական հատկանիշների հիման վրա):

2. Կոմբինատորային. դատողության կոմբինատորային միջոցները կարևոր դեր են խաղում մտածողության ընդհանուր կառուցվածքի մեջ, իսկ կոմբինատորային մտածողության առավել բնորոշ գիծը խնդրի լուծման ժամանակ սուբյեկտի կողմից ինչ-որ հատկանիշների և պատահույթների համակցումն է, բոլոր հնարավոր տարբերակների որոշման, դիտարկման և հաշվի առնման կարողությունը:

3. Հավանականային-վիճակագրական. սովորողների՝ անորոշ իրավիճակներում կողմնորոշվելու, վիճակագրական բնույթի տեղեկույթ վերլուծելու և «հավանականություն» հասկացությունը օգտագործելու կարողություն:

Եզրակացություն:

Այսպիսով՝ հավանականային մտածողության զարգացման հոգեբանա-մանկավարժական տեսակետները հետևյալներն են.

1. Պատահականության մասին պատկերացումները և հավանականային մտածողությունը զարգանում են Ժ. Պիաժեի առաջարկած ինտելեկտի զարգացման օպերացիոնալ տեսության շրջանակներում: Որպես հավանականային-վիճակագրական բովաղակության ուսուցման հիմք՝

հանդես են գալիս օպերացիոնալ ուսուցման Լ. Ս. Վիգոտսկու, Պ. Յա. Գալպերինի, Ա. Ն. Լեոնտևի հայացքները, որոնց էությունը Պ. Յա. Գալպերինի [1, 8] առաջ քաշված մտավոր գործողությունների փուլային զարգացման հայացքներին համապատասխան ուսուցման կազմակերպման մեջ է:

2. Հավանականային գաղափարների և մեթոդների հետ փուլային ծանոթացումը նպաստավոր ազդեցություն է ունենում դպրոցականների հավանականային մտածողության ձևավորման և զարգացման գործընթացի վրա:

3. Տարրական դպրոցում ստոխաստիկայի տարրերի հետ ծանոթացումը տեղի է ունենում ակնառու-տրամաբանական մակարդակի վրա բազմաթիվ խաղերի և փորձերի ներգրավմամբ, ինչը նրանց մոտ ձևավորում է փորձնական պատկերացումներ պատահական օրինաչափությունների մասին: Հավանականային պատկերացումների ձևավորման համար առավել նպաստավոր է 10-13 տարեկան տարիքը:

4. «Ֆորմալ օպերացիաների» փուլին անցումը (11-15 տարեկան), վերացական և տեսական մտածողության գերակշռությունը, բանավոր ձևակերպված վարկածների օգնությամբ դատելու կարողության ի հայտ գալը բարենպաստ և էական պայման են հանդիսանում հիմնական և ավագ դպրոցում հավանականային մտածողության ձևավորման համար:

DOI: <https://di.org/10.58726/27382923-ne2024.1-116>

Գրականություն

1. Гальперин П.Я., Формирование умственных действий/ П.Я. Гальперин. Москва: Издательство Московского университета, 1981, - 86 с.
2. Геворкян П.С. Теория вероятностей и математическая статистика/ П.С. Геворкян. Москва: Физматлит, 2016, 176 с.
3. Пиаже Ж., Психология интеллекта: Научные монографии. Москва, Директ-Медиа, 2008, - 351 с.
4. Пиаже Ж., Инельдер Б. Генезис элементарных логических структур: Психология XX век. Эксмо-Пресс, 2002, 488 с.
5. Прохоров А. В. и др., Введение в теорию вероятностей. Приложение к журналу «Квант», N 4, 2015, с. 27.

**Психолого-педагогические грани обучения стохастики и
формирования вероятностного мышления школьника
в системе общего образования**

*Лида Аванесян
Армине Саакян*

Резюме

***Ключевые слова:** теория вероятностей, математическая статистика, комбинаторика, мышление, логика, словесно-логическая мышление*

В статье рассматриваются психолого-педагогические грани обучения стохастики и формирования вероятностного мышления школьника. **Новизна** статьи заключается в том, что выдвинуты и обсуждены задания, доступные для детей разного возраста в зависимости от возрастных особенностей: (например, как можно поручить ту же задачу ребенку 7-9 лет и старше, формируя при этом представления о событии, его вероятности и т. д.). **Проблема** обсуждения данного материала заключается в том, что в настоящее время у разработчиков нового содержания школьного курса математики приоритетным становится формирование возрастной и социальной подготовки учащихся к пониманию тех или иных стохастических процессов, а также способности к теоретическим обобщениям, закономерностей, связанных с массовыми случайными явлениями. Для решения сформулированной проблемы мы поставили перед собой **цель** обратиться к психологии в плане выявления общих закономерностей мышления и познавательной деятельности детей разных возрастных групп. На основе проведенного анализа мы пришли к **выводу**, что использование элементов стохастики в обучении математике оказывает непосредственное влияние на формирование, развитие и совершенствование всех трех типов мышления у учащихся.

Psychological and Pedagogical Aspects of Learning Stochastics and the Formation of Probabilistic Thinking of a School Student in the System of General Education

*Lida Avanesyan
Armine Sahakyan*

Summary

Key words: *probability theory, mathematical statistics, combinatorics, thinking, logic, verbal-logical thinking*

The article discusses the psychological and pedagogical aspects of learning stochastics and the creation of probabilistic thinking of a pupil. The **novelty** of the article lies in the fact that the tasks available to children of different ages, depending on age characteristics, were put forward and discussed (for instance, how to give the same assignment to a youngster who is 7-9 years old or older while helping them establish concepts related to probability and chance, etc.).

The problem of discussing this material is that currently, the developers of the new content of the school mathematics course are prioritizing the formation of age and social preparation of pupils to understand certain stochastic processes, as well as the ability to make theoretical generalizations and patterns associated with mass random phenomena. To solve the formulated problem, we set ourselves a **purpose** to turn to psychology in terms of identifying common patterns of mental and cognitive activity of children of different age groups. Based on the analysis, we came to the **conclusion** that the use of stochastic elements in teaching mathematics has a direct impact on the formation, development and improvement of all three types of thinking among students.

Ներկայացվել է 02.03.2024 թ.

Գրախոսվել է 10.04.2024 թ.

Ընդունվել է տպագրության 30.05.2024 թ.

**Չորրորդ դասարանում դիտարկվող ոչ ստանդարտ խնդրի
լուծման տարբերակների վերանայում**

Արևիկ Բաղդասարյան

DOI: <https://di.org/10.58726/27382923-ne2024.1-130>

Հանգուցային բառեր. թվաբանական, տեքստային, որոնողական, հետաքրքրաշարժ խնդիրներ, ենթադրությունների մեթոդ, վարկածների առաջադրում, բաղադրիչներ

Նախաբան

Ոչ ստանդարտ մաթեմատիկական խնդիրները արժեքավոր միջոց են տարրական դպրոցների մաթեմատիկական կրթությունը հարստացնելու համար:

Ոչ ստանդարտ մաթեմատիկական խնդիրները ոչ սովորական առաջադրանքներ են, որոնք շեղվում են սովորական վարժություններից և պահանջում են սովորողներին կիրառել մաթեմատիկական հասկացությունները նորարարական ձևերով: Այս խնդիրները հաճախ ներառում են իրական կյանքի սցենարներ, հանելուկներ կամ բաց հարցեր, որոնք խրախուսում են սովորողներին ուսումնասիրել լուծման բազմաթիվ ուղիներ:

Այս խնդիրները խթանում են քննադատական մտածողությունը՝ պահանջելով սովորողներից վերլուծել, սինթեզել և գնահատել տեղեկատվությունը նոր համատեքստում:

Այս խնդիրները պահանջում են ճանաչողական ներգրավվածության ավելի բարձր մակարդակ՝ պահանջելով սովորողներից վերլուծել խնդրի բաղադրիչները, բացահայտել համապատասխան տեղեկատվությունը և սինթեզել այդ տարրերը՝ լուծում մշակելու համար:

Ոչ ստանդարտ մաթեմատիկական խնդիրները հաճախ արտացոլում են իրական աշխարհի սցենարները՝ պահանջելով սովորողներից կիրառել վերացական մաթեմատիկական հասկացություններ գործնական իրավիճակներում: Այս կապը օգնում է սովորողներին՝ տեսնելու մաթեմատիկական սկզբունքների համապատասխանությունը՝ կամրջելով տեսության և կիրառման միջև եղած բացը:

Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել չորրորդ դասարանում քննարկվող ոչ ստանդարտ խնդիրների մի տեսակ, որն առանձնահատուկ դժվարություն է ներկայացնում ուսանողների շրջանում, ովքեր պետք է ուսուցանեն այդ խնդիրները կրտսեր դպրոցում:

Մաթեմատիկական կրթությունը և մաթեմատիկական մտածելակերպն անհրաժեշտ են գրեթե բոլոր բնագավառներում: Մաթեմատիկայի դասընթացի ուսուցման գործընթացում ընդգծված տեղ է հատկացվում տեքստային խնդիրների լուծմանը: Մաթեմատիկական խնդիրներն ունեն ուսուցողական, գործնական և դաստիարակչական նշանակություն: Նրանք զարգացնում են սովորողների ալգորիթմական, տրամաբանական մտածողությունը, մշակում մաթեմատիկական կիրառելի գործնական հմտություններ: Խնդիրների լուծումը նրանց մղում է ստեղծագործական աշխատանքի:

Զարգացնող ուսուցման համատեքստում առանձնակի տեղ պետք է հատկացնել ոչ ստանդարտ խնդիրների լուծմանը: Ոչ ստանդարտ խնդիրներ ասելով նկատի ունենք որոնողական, հետաքրքրաշարժ, կոմբինատորական և այլ խնդիրներ, որոնց լուծման համար մաթեմատիկայի տարրական դասընթացում ընդհանուր կանոններ չեն մշակվել, դրանց լուծման եղանակները երեխաներին հայտնի չեն: Այդ խնդիրների բովանդակությունը երեխաներին չեն հուշում, թե ուսուցված նյութերից ինչը պետք է օգտագործել տվյալ խնդիրը լուծելու համար [3, 104-117]:

Ոչ ստանդարտ խնդիրներն ուսումնական գործընթացում աշակերտների կողմից վարկածների առաջադրման և դրանց հարստացման կամ ժխտման պայմաններ են ստեղծում: Այդպիսի խնդիրների լուծման համար պետք է ձգտել ուշադրությունը կենտրոնացնել գլխավորի վրա՝ այն առանձնացնելով ոչ հիմնականից: Դրա համար նախ պետք է խնդրի բովանդակությունն ընկալել ամբողջությամբ, այնուհետև ուշադրություն դարձնել բաղադրիչների վրա և խնդիրը տրոհել մասերի, որը կօգնի գտնել խնդրի լուծումը:

Պետք է նկատի ունենալ, որ որոշ աշակերտներ, չընկալելով խնդրի ամբողջական բովանդակությունը, ուշադրություն են դարձնում նրա առանձին մասերի վրա: Խնդիրը մասերի տրոհելուց և դրանց ուսումնասիրությունից հետո պետք է նորից այն դիտել ամբողջությամբ, մասերը միավորելու ճանապարհով [3, 104-117]:

Տեքստային խնդիրների լուծման ընթացքը կարելի է պայմանականորեն տրոհել հետևյալ փուլերի.

1. Խնդրի բովանդակության վերլուծություն, համառոտագրում, լուծման պլանի կազմում: Այս փուլում պարզաբանված է, թե ինչ տվյալներ են հայտնի խնդրի պայմանում, ինչ կապ կա տվյալների, ինչպես նաև դրանց և անհայտ մեծության միջև: Խնդրի վերլուծությունը կարելի է կատարել կամ վերլուծական (հարցից դեպի տվյալներ) կամ համադրական (տվյալներից դեպի հարց) եղանակով:

2. Խնդրի սխեմատիկ գրառում:

3. Խնդրի լուծման եղանակի ընտրություն:

4. Խնդրի լուծում:

5. Խնդրի լուծման ստուգում.

- տարբեր եղանակներով խնդրի լուծում,
- տրված խնդրի հակադարձի կազմում և լուծում,
- խնդրի լուծման արդյունքում ստացած և պայմանում տրված թվերի միջև համապատասխանության ստեղծում,
- որոնելի մեծության թվային արժեքի մոտավոր հաշվում:

6. Խնդրի ուսումնասիրություն:

7. Խնդրի պատասխանի ձևակերպում:

8. Խնդրի լուծման վերլուծություն:

Սովորաբար ոչ ստանդարտ խնդիրների լուծման համար պահանջվում է կատարել առանձնահատուկ կոմբինացիաներ:

Դիտարկենք չորրորդ դասարանի դասագրքում զետեղված ոչ ստանդարտ խնդրի օրինակ.

Խնդիր 710 (բ) [4, 122]:

Այգի մոտ կա 500 և 200 դրամանոց ընդհանուր թվով 25 մետաղադրամ: Այդ մետաղադրամների ընդհանուր գումարը 9200 դրամ է: Այգը քանի՞ 500 և քանի՞ 200 դրամանոց մետաղադրամ ունի:

Լուծում. Ընդունենք, որ բոլոր մետաղադրամները 200 դրամանոց են, այդ դեպքում կստանանք $200 \cdot 25 = 5000$ (դր): Սակայն մետաղադրամների ընդհանուր գումարը 9200 է: Եթե 9200-ից հանենք 5000, կստանանք 4200, որը ստացվել է 500 և 200 դրամանոցների չհաշված 300 դրամներով.

$500 - 200 = 300$ (դր): Եթե 4200-ը բաժանենք 300-ի, կստանանք 14 հատ 500 դրամանոց: Հետևաբար $25 - 14 = 11$ (հատ) 200 դրամանոց:

Լուծումը գրենք հարցերով.

- 1) $200 \cdot 25 = 5000$ (դրամ),
- 2) $9200 - 5000 = 4200$ (դրամ),
- 3) $500 - 200 = 300$ (դրամ),
- 4) $4200 : 300 = 14$ (հատ) – 500դրամանոց,
- 5) $25 - 14 = 11$ (հատ) – 200 դրամանոց:

Պատ.՝ 14 հատ 500 դրամանոց, 11 հատ 200 դրամանոց:

Ստուգում՝ $14 + 11 = 25$ (հատ) – մետաղադրամ,

$500 \cdot 14 + 200 \cdot 11 = 9200$ (դրամ):

Խնդիրը լուծենք II եղանակով.

Ընդունենք, որ բոլոր մետաղադրամները 500 դրամանոց են, այդ դեպքում՝

$500 \cdot 25 = 12500$ (դրամ): Սակայն մետաղադրամների ընդհանուր գումարը 9200 է: Եթե կազմենք տարբերությունը՝ $12500 - 9200 = 3300$ (դր.), դա կլինի 300 դրամներով լրացված 200 դրամների գումարը, ուստի՝ $3300 : 300$, կստանանք 11, որը ներկայացնում է 200 դրամանոցների քանակը: Եթե կա 11 հատ 200 դրամանոց, ուրեմն՝ $25 - 11 = 14$ հատ 500 դրամանոց:

Լուծումը գրենք հարցերով.

- 1) $500 \cdot 25 = 12500$ (դրամ),
- 2) $12500 - 9200 = 3300$ (դրամ),
- 3) $500 - 200 = 300$ (դրամ),
- 4) $3300 : 300 = 11$ (հատ) – 200 դրամանոց,
- 5) $25 - 11 = 14$ (հատ) – 500 դրամանոց:

Պատ.՝ 11 հատ 200 դրամանոց, 14 հատ 500 դրամանոց:

Դիտարկենք նմանատիպ ևս մեկ խնդիր:

Խնդիր 670 [4, 116]:

Դպրոցի 306 աշակերտ 18 տեղանոց և 24 տեղանոց 14 ավտոբուսներով գնացին Օսդկաձոր՝ հանգստանալու: Յուրաքանչյուր տեսակից քանի՞ ավտոբուս էին վարձել աշակերտները:

Լուծում. Ընդունենք, որ բոլոր ավտոբուսները 18 տեղանոց են, այդ դեպքում կստանանք $18 \cdot 14 = 252$ (տեղ): Սակայն մեզ անհրաժեշտ է 306 տեղ, հետևաբար եթե $306 - 252 = 54$ (տեղ): Այս 54 տեղերը առաջացել են 24 տեղանոց ավտոբուսների չհաշված $24 - 18 = 6$ տեղերով: Եթե 54-ը բաժանենք 6-ի, կստանանք 9-ը՝ 24 տեղանոց ավտոբուսների քանակը: Եթե 24 տեղանոց ավտոբուսների քանակը 9 հատ է, ուրեմն 18 տեղանոցը $14 - 9 = 5$ (հատ):

Լուծումը գրենք հարցերով.

- 1) $18 \cdot 14 = 252$ (տեղ),
- 2) $306 - 252 = 54$ (տեղ),
- 3) $24 - 18 = 6$ (տեղ),
- 4) $54 : 6 = 9$ (հատ) – 24 տեղանոց,
- 5) $14 - 9 = 5$ (հատ) – 18 տեղանոց:

Պատ.՝ 9 հատ 24 տեղանոց, 5 հատ 18 տեղանոց:

Ստուգում՝ $9 + 5 = 14$ հատ ավտոբուս,

$24 \cdot 9 + 18 \cdot 5 = 306$ (տեղ):

Խնդիրը լուծենք II եղանակով.

Ընդունենք, որ բոլոր ավտոբուսները 24 տեղանոց են, այդ դեպքում կստանանք $24 \cdot 14 = 336$ (տեղ): Սակայն աշակերտների թիվը 306 է: Եթե կազմենք տարբերությունը $336 - 306 = 30$ (տեղ), դա կլինի $24 - 18 = 6$ տեղերով լրացված 18 տեղանոց ավտոբուսների ընդհանուր թիվը: Հետևաբար՝ 30-ը բաժանելով 6-ի՝ կստանանք 18 տեղանոց ավտոբուսների քանակը՝ $30 : 6 = 5$: Այսպիսով՝ 24 տեղանոց ավտոբուսների քանակը կլինի $14 - 5 = 9$ (հատ):

Լուծումը գրենք հարցերով.

- 1) $24 \cdot 14 = 336$ (տեղ),
- 2) $336 - 306 = 30$ (տեղ),
- 3) $24 - 18 = 6$ (տեղ),
- 4) $30 : 6 = 5$ (հատ) – 18 տեղանոց,
- 5) $14 - 5 = 9$ (հատ) – 24 տեղանոց:

Պատ.՝ 5 հատ 18 տեղանոց, 9 հատ 24 տեղանոց:

DOI: <https://di.org/10.58726/27382923-ne2024.1-130>

Գրականություն

1. Այվազյան Է., Մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկա, Երևան, ԵՊՀ հրատ., 2016:
2. Բանտովա Մ. Ա., Տարրական դասարաններում մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկա, Երևան, «Լույս» հրատ., 1985, էջ 219-240:
3. Իսկանդարյան Ս. Ա., Տարրական դասարաններում խնդիրների ուսուցման մեթոդիկան. ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, «Զանգակ-97», 2010, էջ 104-117:
4. Մկրտչյան Ս., Իսկանդարյան Ս., Դասագիրք հանրակրթական հիմնական դպրոցի չորրորդ դասարանի համար, մաս 2, Երևան, «Զանգակ», 2022:

Обзор вариантов решения нестандартных задач, рассматриваемых в четвертом классе

Аревик Багдасарян

Резюме

Ключевые слова: арифметический, текстовый, поисковый, увлекательные задачи, метод гипотез, выдвижение гипотезы, компоненты

Нестандартные математические задачи — это развивающий, обогащающий и ценный инструмент для математического образования в начальной школе. Эти задачи часто включают в себя сценарии из реальной жизни, головоломки или открытые вопросы и требуют от учащихся инновационного применения математических концепций. Эти проблемы выделяются своей прикладной значимостью.

Нестандартные математические задачи стимулируют критическое мышление, требуя от учащихся анализа, синтеза и оценки информации в новом контексте. Эти задачи требуют высокого уровня когнитивного участия. Нестандартные задачи создают условия для того, чтобы учащиеся выдвигали гипотезы и обогащали или опровергали их в образовательном процессе.

В статье рассматриваются две нестандартные текстовые проблемы, рассматриваемые в четвертом классе, цель которых - выделить и объяснить вопросы, вызывающие затруднения у учащихся (будущих учителей). В задаче необходимо определить количество монет номиналом 500 и 200 драмов, если их 25 и общая сумма составляет 9200 драмов.

Задача решается методом предположений. Решение дается двумя способами, производится проверка.

Review of Nonstandard Problem-Solving Options Considered in Fourth Grade

Arevik Baghdasaryan

Summary

Key words: *arithmetical, textual, searching, fascinating problems, method of conjecture, proposition of hypotheses, components*

Nonstandard math problems are a developmental, enriching, and valuable tool for elementary school math education. These problems often involve real-life scenarios, puzzles, or open-ended questions and require learners to apply mathematical concepts in innovative ways. These problems are highlighted by their practical significance.

Nonstandard math problems stimulate critical thinking by requiring learners to analyze, synthesize and evaluate information in a new context. These problems require a high level of cognitive involvement. Non-standard problems create conditions for pupils to propose hypotheses, enrich or deny them in the educational process.

The paper discusses two non-standard textual problems considered in the fourth grade, the purpose of which is to highlight and explain the issues that present difficulties among pupils (future teachers). The problem requires determining the number of 500 and 200 dram-coins if there are 25 of them and the total amount is 9200 drams.

The problem is solved by the method of assumptions. The solution is given in two ways, and then a check is made.

Ներկայացվել է 10.04.2024 թ.

Գրախոսվել է 25.04.2024 թ.

Ընդունվել է տպագրության 30.05.2024 թ.

**Հավասարակշռության պայմանների կիրառումը
որպես երկրաչափական պնդումների ապացուցման
այլընտրանքային միջոց***

*Վարդան Մանուկյան
Գագիկ Նիկողոսյան*

DOI: <https://di.org/10.58726/27382923-ne2024.1-137>

***Հանգուցային բառեր.** մեխանիկա, մաթեմատիկա, միջառարկայա-
կան կապեր, աքսիոմ, թեորեմ, խնդիր, ուսուցում*

Նախաբան

Հիմնավորումներն ու ապացույցներն ունեն առանցքային նշանակու-
թյուն ինչպես մաթեմատիկայում, այնպես էլ բնագիտական առարկանե-
րում: Չնայած որ ֆիզիկան փորձարարական բնական գիտություն է,
այնուամենայնիվ այն մաթեմատիկային ամենից մոտ գիտությունն է:
Ավելին. ապացուցողական ապարատի առանձնահատկություններով և
մեթոդներով ֆիզիկան նույնպես մոտ է մաթեմատիկային: Մաթեմատի-
կայի բաժիններից էլ ֆիզիկային ամենամոտը կարելի է համարել երկրա-
չափությունը, և սպասելի է, որ միջգիտական խորը կապերի առկայու-
թյունը պետք է իր ազդեցությունն ունենա ֆիզիկայի և երկրաչափության
դասավանդման ձևերի վրա: Նշված դրսևորումները ժամանակին արժա-
նացել են մասնագետների ուշադրությանը, և ներկայումս դրանց ակ-
տուալությունը պայմանավորված է իրենց ՄԹԵՄ բնույթով:

Սույն աշխատանքում, նպատակ ունենալով լուսաբանել ֆիզիկայի և
երկրաչափության խորը կապերը, ներկայացված են երկրաչափական
պնդումների հիմնավորումներ՝ ստատիկայի գաղափարների կիրառամբ:
Դասակարգված են երկրաչափական պնդումների ֆիզիկական հիմնավո-
րումների տարատեսակները, ինչն էլ աշխատանքի հիմնական գիտամե-
թոդական նորույթն է:

Աշխատանքի առաջին մասում ներկայացված են ֆիզիկայի և երկրա-
չափության միջգիտական կապերն ու դրանց առանձնահատկություն-
ները: Յուրյց է տրված այդ գիտությունների փոխադարձ ազդեցությունները
դրանց ձևավորման և զարգացման ընթացքում: Հաջորդ բաժնում ներկա-

* Հետազոտությունն իրականացվել է ՇՊՀ-ի կողմից տրամադրվող ֆինանսա-
կան աջակցության շնորհիվ՝ *SUSh-PRIOR N01-SCI-2024* ծածկագրով գիտական
թեմայի շրջանակներում:

յացված են երկրաչափության մեջ ֆիզիկայի ապացուցողական բնույթի կիրառությունների օրինակներ և արված է դրանց դասակարգում: Առաջին դասին պատկանող հիմնավորումներում ֆիզիկական գործիքակազմը արդեն իսկ պարունակում է հիմնավորելու ենթակա երկրաչափական պնդումը: Երկրորդ դասին պատկանում են ինտուիտիվ բնույթ կրող ֆիզիկական դատողությունների օգնությամբ հիմնավորվող երկրաչափական պնդումները: Երրորդ դասին պատկանում են այն հիմնավորումները, որոնց հիմքում երկրաչափական աքսիոմատիկայի փոխարեն դրված են ֆիզիկական օրենքներ կամ հիպոթեզներ: Նշված երեքի մեջ վերջինի ապացուցողական հիմքերը ամենախիստն ու անկախն են: Աշխատանքի վերջին բաժնում դիտարկված են երկրաչափական պնդումների ապացույցներ հենված մարմինների հավասարակշռության պայմանների կիրառման վրա: Ներկայացված են քննարկված մոտեցումների կիրառությունների հնարավորությունը ՄԹԵՄ ուսուցման համատեքստում:

Ֆիզիկայի և երկրաչափության միջգիտական կապերի մասին

Մաթեմատիկան (մասնավորապես երկրաչափությունը) ճշգրիտ աքսիոմատիկ գիտություն է: Հանրակրթական դպրոցում ուսումնասիրում են էվկլիդեսյան երկրաչափությունը, որն ունի 5 աքսիոմներից կազմված աքսիոմատիկ հիմք և մնացած ցանկացած պնդում անհրաժեշտ է ապացուցել կամ նշված աքսիոմների ուղիղ կիրառման ճանապարհով և կամ էլ դրանց օգնությամբ արդեն ապացուցված այլ պնդումների (թեորեմներ, լեմմաներ, հասկություններ և այլն) օգնությամբ: Երկրաչափական աքսիոմներն ունեն էմպիրիկ բնույթ, և մեծ հաշվով փորձն է հուշում, թելադրում և ցույց տալիս դրանց իրավացի լինելը: Այս իմաստով երկրաչափությունն ու ֆիզիկան ունեն խորքային ընդհանրություններ, և զարմանալի չէ, որ շատ հետազոտողներ երկրաչափությունը համարում են ֆիզիկայի բաժին: Ավելին, կառուցված, մշակված և իրենց կիրառելիության սահմաններում ճշգրիտ աշխատող հիմնարար ֆիզիկական տեսությունները նույնպես կարելի է շարադրել աքսիոմատիկ եղանակով: Օրինակ՝ Ջոն ֆոն Նեյմանը քվանտային մեխանիկան շարադրեց որպես աքսիոմատիկ գիտություն:

Պատմականորեն սկզբից ստեղծվել և կիրառվել է էվկլիդեսյան երկրաչափությունը, որն իր ծնունդով պարտական է մի կողմից մարդկային առօրեական պահանջների, իսկ մյուս կողմից՝ հետաքրքրությունների բավարարմանը և հենված է եղել անտիկ մարդու կենսափորձի վրա: Դարեր շարունակ համարվել է, որ էվկլիդեսյան երկրաչափությունը միակ ճշմարիտ երկրաչափական տեսությունն է ու պետք է մտածել


միայն դրա կիրառությունների հետագա զարգացման մասին, և իմաստ չունի խորհել դրա արքիոմատիկ հիմքերի հիմնավորումների մասին: Չնայած որ պրակտիկ կիրառություններում էվկլիդեսյան երկրաչափությունը իդեալական ճշտությամբ աշխատում էր, որոշ մաթեմատիկոսների մոտ առաջացան կասկածներ առ այն, որ անհակասական երկրաչափական համակարգ կարելի է կառուցել նաև ուրիշ արքիոմատիկ համակարգի հիմքով: Գնդային մակերևույթի և հարթության երկրաչափությունների տարբերությունների մասին մտորումները ստիպեցին մեծ մաթեմատիկոս Կառլ Ֆրիդրիխ Գաուսին փորձական ճանապարհով ստուգելու էվկլիդեսյան երկրաչափության արքիոմները: Նա ընտրեց երեք լեռնագագաթ՝ Հոգեն-Հագեն, Բնսելսբերգ և Բրոկեն և այն ժամանակվա անկյունաչափական գործիքներին հասանելի ողջ ճշգրտությամբ չափեց այդ գագաթները միացնող կողմերի կազմած անկյունները: Մի քանի անգամ կրկնելով չափումները՝ Գաուսը եռանկյան անկյունների գումարի համար 180 աստիճանից որևէ շեղում չգրանցեց: Ներկայումս պարզ է, որ երկրամերձ գրավիտացիան չափազանց թույլ է կորացնում տարածությունը, որն անհնար էր գրանցել տվյալ ժամանակի սարքերի միջոցով (և ներկայիս սարքերի միջոցով նույնպես): Փորձական փաստերի բացակայությունը, սակայն, չընկճեց մաթեմատիկոսներին, և նրանց համարձակ գաղափարների և համառ ջանքերի շնորհիվ ստեղծվեցին ոչ էվկլիդեսյան երկրաչափություններ: Դրանցից հատկապես հայտնիները Լոբաչևսկու և Ռիմանի երկրաչափություններն են: Տարիներ անց Ալբերտ Այնշթայնը իր հարաբերականության ընդհանուր տեսության ձևակերպումը իրականացրեց Ռիմանի երկրաչափության կիրառմամբ: Այս տեսության ստեղծումով ֆիզիկական կարծես միավորվեց երկրաչափությանը, և պարզաբանվեց, որ Տիեզերքի երկրաչափական հատկությունները կախված են մատերիայի բաշխումից: Նյութն ու էներգիան կորացնում են տարածությունը և դրանով «թելադրում նրա երկրաչափությունը»: Ռոջեր Փենրոուզի և Սթիվեն Հոքինգի աշխատանքների շնորհիվ հարաբերականության ընդհանուր տեսության հիմնարար գաղափարները ներկայացվեցին բոլորովին այլ լույսի ներքո, և տեսությունն ավելի երկրաչափականացավ: Վերջապես գրավիտացիայի տեսությանը նվիրված դասական եռահատորյակում Չարլզ Ուիլերի, Քիպ թորնի և Ջոն Ուիլլերի կողմից ամրագրվեց երկրաչափադինամիկական մոտեցումը, համաձայն որի՝ ֆիզիկական մեծություններն ու դրանց կապող առնչությունները ամբողջությամբ կարելի է ներկայացնել երկրաչափական լեզվով: Այս նախագիծը հետագայում զարգացվեց, սակայն բախվեց լուրջ դժվարությունների և ի վերջո չիրականացավ: Դժվար է ասել, թե ժամանակի ընթացքում ինչպիսի հաջողու-

թյուններ կգրանցի կամ չի գրանցի ֆիզիկական ամբողջությամբ երկրաչափություն «դարձնելու» երկրաչափադինամիկական միտումը, սակայն մի բան հաստատ է, որ երկրաչափության և ֆիզիկայի կապերը խորն են ու փոխներգործուն:

Մաթեմատիկական պնդումների հիմնավորումը ֆիզիկական գաղափարների օգնությամբ

Վերադարձի ճանապարհ, կամ ոչ այնքան ապացույց: Պարզվում է, որ ուսուցման տարրական մակարդակում նույնպես կարելի է մաթեմատիկական և հատկապես երկրաչափությունը «մոտեցնել և միավորել» ֆիզիկային, կամ ֆիզիկական՝ երկրաչափությանը: Խոսքը չի վերաբերում ստանդարտ միջառարկայական կապերին, այլ առավել հետաքրքիր, անսպասելի ու խորքային երևույթներին, երբ մաթեմատիկական պնդումները ապացուցվում են մեխանիկայի կամ ֆիզիկայի մեկ այլ բաժնի իմացությունների օգնությամբ: Նման դեպքերում հաճախ *A* մաթեմատիկական պնդումը ապացուցելու համար օգտվում ենք ֆիզիկայում հայտնի *B* պնդումից, որի ապացուցման համար ժամանակին օգտվել ենք մաթեմատիկական բնույթի դատողություններից, և հնարավոր է նաև, հենց *A* պնդումից: Որպես օրինակ քննարկենք հետևյալ հայտնի խնդիրը.

Ուղղից դուրս՝ նրա միննույն կողմում գտնվում են A և B կետերը (նկար 1): Ուղիղն ու նշված կետերը գտնվում են միննույն հարթության մեջ: Որոշել ուղղին պատկանող այն C կետը, որի համար $AC + CB$ գումարն ընդունում է նվազագույն արժեք:



Նկար 1. α -ն և β -ն համապատասխանաբար *AC* և *BC* հատվածների կազմած անկյուններն են *C* կետում *c* ուղղին տարված ուղղահայացի նկատմամբ

Խնդիրը կարելի է լուծել գուտ երկրաչափական մոտեցմամբ՝ լրացուցիչ կառուցման ճանապարհով: Կարելի է նաև ներմուծել *C* կետի դիրքը բնութագրող որևէ փոփոխական, $AC + CB$ գումարն արտահայտել այդ

փոփոխականով և մաթեմատիկական անալիզի տարրական կիրառմամբ լուծել ֆունկցիայի նվազագույն արժեքի որոշման այս խնդիրը: Լուծման արդյունքում ստացվում է, որ հատվածների երկարությունների նվազագույն գումար կստացվի, երբ $\angle \alpha = \angle \beta$ (նկար 1): Վերջապես խնդիրը կարելի է լուծել ֆիզիկական գաղափարների կիրառման օգնությամբ: Պատկերացնենք հարթ հայելի, որի վրա գտնվում է մեր դիտարկած ուղիղը: Թող հայելու մակերևույթը ուղղահայաց լինի ուղղով և A ու B կետերով անցնող հարթությանը: Դիտարկենք լուսային ճառագայթ, որը, դուրս գալով A կետից, անդրադառնում է հայելու վրա և տարածվում դեպի B կետ: Համաձայն Ֆերմայի սկզբունքի՝ այդ ընթացքում լույսը ծախսում է նվազագույն ժամանակ, և օպտիկապես համասեռ միջավայրի դիտարկման պարագայում այն նաև անցնում է նվազագույն ճանապարհ: Վերջինս արտահայտում է մեր խնդրի պահանջն առ այն, որ $AC + CB$ -ն պետք է ընդունի փոքրագույն արժեք: Մյուս կողմից, լույսի անդրադարձման օրենքից հայտնի է, որ C կետից անդրադարձման համար տեղի ունի $\angle \alpha = \angle \beta$ պայմանը, ինչն էլ անհրաժեշտ էր ստանալ: Փաստորեն օգտվելով լույսի անդրադարձման օրենքից և Ֆերմայի սկզբունքից՝ մենք լուծեցինք ներկայացված երկրաչափական խնդիրը: Սակայն հարկ է նշել, որ երբ ֆիզիկայում լույսի անդրադարձման օրենքը ստանում են Ֆերմայի սկզբունքից, կիրառում են ճիշտ նույն մաթեմատիկական միջոցները, որոնցից մենք «խուսափեցինք» մեր խնդրի ֆիզիկական մոտեցմամբ լուծման ընթացքում: Այլ կերպ ասած՝ ֆիզիկայում որոշ օրնաչափությունների ու պնդումների հանգում ենք բացի գուտ ֆիզիկական օրենքների և դատողությունների, այլև մաթեմատիկական բնույթի պնդումների կիրառման արդյունքում: Արդյունքում ստացվածը, բացի ֆիզիկական բովանդակությունից, իր մեջ պարունակում է նաև որոշակի մաթեմատիկական իրողություն, որն անհրաժեշտության պարագայում կարելի է օգտագործել: Օրինակ՝ տարբեր պոտենցիալային ուժերով պայմանավորված պոտենցիալ էներգիաների արտահայտությունները ընդհանուր դեպքում ստացվում են այդ ուժերի կատարած աշխատանքը բնութագրող կորագիծ ինտեգրալների հաշվման ճանապարհով: Եվ հետո, երբ արդեն պատրաստի տեսքով ունենք պոտենցիալ էներգիաների այդ արտահայտությունները, կարելի է մաթեմատիկական անալիզի դասընթացում քննարկվող տարբեր ինտեգրալներ ներկայացնել որպես տարբեր իրավիճակներում հայտնի պոտենցիալային ուժերի կատարած աշխատանք և հեշտությամբ հաշվել դրանք [7, 109-114]:

Ինտուիտիվ բնույթի ֆիզիկական պնդումների կիրառում: Վերը

քննարկված դեպքերի դիտարկումը կարող է նպաստել միջառարկայական կապերի ամրացմանը, սակայն չպետք է մոռանալ, որ բոլոր նման դեպքերում ֆիզիկական ընդամենը մաթեմատիկային է տրամադրում ճիշտ այն նույն տեղեկությո՞ւրը, հնարքներն ու միջոցները, որոնք նա վերցրել էր մաթեմատիկայից իր ձևավորման և զարգացման ընթացքում: Նման դեպքերում մաթեմատիկական պնդումների հիմնավորումները ֆիզիկական մոտեցումների միջոցով թեկուզ և հետաքրքիր են ու օգտակար, սակայն, խիստ ասած, չունեն ապացուցողական բնույթ: Առավել արժեքավոր են այն դեպքերը, երբ մաթեմատիկական պնդման ֆիզիկական ապացույցները հենված են բոլորովին այլ անկախ հիմքերի վրա: Երբեմն այդ հիմքերը ինտուիտիվ բնույթ կրող ֆիզիկական պնդումներ են: Վերջիններս նույնպես չեն կարող համարվել խիստ մաթեմատիկական ապացույցներ, սակայն կարևոր են միջառարկայական կապերի վերհանման տեսակետից: Նշենք նաև, որ ուսուցման գործընթացում ցանկալի է խրախուսել սովորողների մոտ ինտուիտիվ բնույթի վարկածների առաջարկման համարձակությունը՝ չմոռանալով, իհարկե, դրանց հետագա հիմնավորումների անհրաժեշտության մասին: Գիտության մեջ նույնպես բազմաթիվ կարևոր գաղափարներ սկզբում առաջադրվել են ինտուիտիվ մակարդակով, որոնք հետագայում նոր միայն ստացել են իրենց խիստ հիմնավորումները: Օրինակ, Օլիվեր Հեվիսայդն իր կողմից մշակած օպերատորական հաշվի կիրառմամբ տասնիններորդ դարի վերջերին լուծել է էլեկտրական լարերում տատանումների տարածման կիրառական կարևորություն ունեցող մի շարք խնդիրներ այն դեպքում, երբ օպերատորական հաշիվը դեռ չէր ստացել իր պատշաճ մաթեմատիկական հիմնավորումը: Ի պատասխան այդ կապակցությամբ ժամանակի մաթեմատիկոսների հանդիմանանքներին Հեվիսայդը մի անգամ արտահայտվել է. «Կարո՞ղ եմ արդյոք հրաժարվել ճաշից, քանի որ լիովին չեմ հասկանում մարտողության գործընթացը»: Տարիներ շարունակ օպերատորական հաշիվը ունեցավ իր օգտակար կիրառությունները, և միայն քսաներորդ դարի կեսերին մաթեմատիկոսների ջանքերի շնորհիվ այն ստացավ իր հիմնավորումը՝ պատշաճ մաթեմատիկական խստությամբ:


Այժմ անդրադառնանք ուսուցման գործընթացում ինտուիտիվ պնդումների կիրառմանը: Ներկայացնենք միջին թվաբանականի ու միջին ներդաշնակի միջև հայտնի անհավասարության մի հիմնավորում, որը հիմնված է ինտուիտիվ մակարդակով արված ֆիզիկական մեկ գաղափարի կիրառման վրա [7, 78-79; 8, 275]: Դիտարկենք r և R դիմադրություններով ռեզիստորներից կազմված նկար 2-ում պատկերված միացումը: Ֆիզիկական տեսակետից պարզ է, որ շղթայում արված կարճ միա-

ցումները չեն կարող մեծացնել շղթայի դիմադրությունը (*ինտուիտիվ մակարդակով արված պնդում*): Ոստի, եթե A և B կետերը միացնենք կարճ միացմամբ, ապա ստացված $\frac{2rR}{r+R}$ դիմադրությունը չի կարող մեծ լինել

մինչ միացումը դրա ընդունած $\frac{r+R}{2}$ արժեքից: Վերջինս փաստորեն

հիմնավորում է հայտնի $\frac{2rR}{r+R} \leq \frac{r+R}{2}$ անհավասարությունը: Այս

անհավասարության ապացուցման տարբեր մաթեմատիկական միջոցներ կան, սակայն դրանց մեջ ամենապատկերավորն ու գեղեցիկը հավանաբար հին հույն մաթեմատիկոս Պապպոս Ալեքսանդրացու կողմից բերված հայտնի երկրաչափական ապացույցն է: Այս իմաստով միջինների հայտնի կապը կարելի է համարել նաև երկրաչափական պնդում:



Նկար 2. A և B կետերի միացման արդյունքում տեղամասը երկու միատեսակ ռեզիստորների զուգահեռ միացումից վերածվում է հավասար դիմադրություններով տեղամասերի հաջորդական միացման


Հիմնավորում՝ ֆիզիկական կանխադրությունների և օրենքների օգնությամբ: Մի շարք կարևոր երկրաչափական պնդումներ կարելի է ապացուցել մեխանիկայի էմպիրիկ կամ քսիոմատիկ բնույթի պնդումների, ինչպես նաև լրացուցիչ պարզագույն մաթեմատիկական միջոցների օգնությամբ: Խոսքը վերաբերում է ստատիկայի քսիոմներին, պահպանման օրենքներին, եռանկյունների նմանության հայտանիշներին և այլն: Համակողմանի վերլուծության արդյունքում պարզվել է, որ երկրաչափական բնույթի պնդումների նման ֆիզիկական հիմնավորումները հենված են ամուր հիմքերի վրա և կարող են համարվել ապացույցներ [3, 54-55]: Ստորև կներկայացնենք դրանք՝ շեշտադրելով ստատիկայի կիրառությունները երկրաչափական ապացույցներում:

Որոշ երկրաչափական պնդումների ապացույցը մարմինների հավասարակշռության պայմանների կիրառմամբ

Երկրաչափական պնդումների ապացույցները՝ հենված զանազան

մեխանիկական մոտեցումների վրա, այնքան հին են, որքան երկրաչափությունն ու մեխանիկան: Նման մոտեցումներ սկսել են ձևավորվել դեռևս հին հույների մոտ: Օրինակ՝ Արքիմեդը, օգտվելով հավասարակշռության պայմաններից, որոշել է պարաբոլական սեգմենտի մակերեսը և ապացուցել է, որ կամայական եռանկյան միջնագծերը հատվում են մի կետում: Ուսուցման գործընթացում մեխանիկայի կիրառմամբ երկրաչափական խնդիրների լուծման վերաբերյալ համակարգված ու մշակված մոտեցումներ ձևավորվել են խորհրդային ֆիզիկոս մանկավարժների աշխատանքներում [3; 4]: Այդ ուղղությամբ նշանակալի աշխատանքներ կան արված նաև մաթեմատիկոս մանկավարժների կողմից, որոնցում կիրառելով զանգվածների կենտրոնի բանաձևը՝ լուծվում են բազմաթիվ երկրաչափական խնդիրներ [2]: Օգտվելով նման մոտեցումներից տարբեր կառուցվածքի ու կազմության մեխանիկական համախմբերի հավասարակշռության պայմանների քննարկման ճանապարհով ապացուցված են Պյութագորասի թեորեմը, սինուսների և կոսինուսների թեորեմները, եռանկյունների անկյան կիսորդների, բարձրությունների և միջնագծերի թեորեմները, Չևայի թեորեմը, շրջանագծի երկու հատվող լարերի մասին թեորեմը և այլն: Նշված մոտեցումներում իդեալականացված երկրաչափական օբյեկտները (կետ, ուղիղ, հարթություն,...) փոխարինվում են նույնպես իդեալականացված, սակայն ֆիզիկական օբյեկտներով (նյութական կետ, հաստություն չունեցող, բայց զանգված ունեցող թել կամ ձող, կետում կիրառված ուժ և այլն): Բնականաբար, փոխելով օբյեկտները, պետք է փոխենք նաև դրանց վերաբերող աքսիոմատիկան, և երկրաչափական աքսիոմների փոխարեն պետք է կիրառել մեխանիկայի օրենքներ կամ կանխադրյալներ: Դրանցից են, օրինակ, ուժերի գումարման և ուժերի բաղադրիչների վերլուծման ստատիկայի աքսիոմները, մարմինների հավասարակշռության պայմանները և լրիվ մեխանիկական էներգիայի պահպանման օրենքը: Պարզ է, որ վերջիններս չեն բխում երկրաչափության աքսիոմներից և, հետևապես, երկրաչափական պնդումների հիմնավորման համար հանդիսանում են անկախ ապացուցողական հիմք: Օրինակ՝ օգտվելով [3, 18]-ում ցուցաբերած մոտեցմանը համանման մոտեցումից՝ ապացուցենք Պյութագորասի թեորեմը: Ի տարբերություն նշված գրքի՝ գազ պարունակող բալոնի փոխարեն դիտարկենք նույն տեսքի մարմին, որը շրջապատված է գազով (նկար 3): Պարզ է, որ արտաքին ճնշման ուժերի ազդեցության տակ պրիզման գտնվում է հավասարակշռության վիճակում: Հակառակ դեպքում, եթե այն ինչ-որ ձևով շարժվեր, կունենայինք հավերժական մեխանիկական շարժիչ: Օտոանցքի նկատմամբ դիտարկելով պրիզմայի նիստերի վրա ազդող

Ճնշման ուժերի գործադրած մոմենտների հավասարակշռության պայմանը՝ $Pah \frac{a}{2} + Pbh \frac{b}{2} = Pch \frac{c}{2}$, ստանում ենք Պյութագորասի թեորեմը՝ $a^2 + b^2 = c^2$:



Նկար 3. *h* բարձրությամբ ուղիղ պրիզման, որի հիմքը *a* և *b* էջերով ու *c* ներքնաձիգով ուղղանկյուն եռանկյուն է, գտնվում է գազում, որի ճնշումը *P* է:

Օտանցքի նկատմամբ պրիզմայի նիստերի վրա ազդող ճնշման ուժերի բազուկները $a/2, b/2, c/2$ են

Նշենք, որ Պյութագորասի թեորեմի համանման ապացույց, սակայն հիդրոստատիկ ճնշման ուժերի մոմենտների հավասարակշռության քննարկման օգնությամբ, դիտարկված է [7, 9-11]-ում: Ինչպես տեսնում ենք, բոլոր նմանօրինակ ապացույցները հիմնված են հավերժական շարժիչ ստեղծելու անհնարինությունը փաստող պոստուլատի և հավասարակշռության պայմանների կիրառման վրա, որոնք իրենց հիմնավորման համար չեն պահանջում Պյութագորասի թեորեմի կիրառում: Նույն հենքի օգնությամբ կարելի է ապացուցել նաև այլ երկրաչափական պնդումներ: Օրինակ, էթե դիտարկենք գազում գտնվող ուղիղ եռանկյուն պրիզմա, ապա հեշտությամբ կարելի է ապացուցել, որ կամայական եռանկյան միջնուղղահայացները հատվում են մեկ կետում: Իրոք, քանի որ եռանկյան կողմերը զուգահեռ չեն, դրանցից կամայական երկուսի միջնուղղահայացները հատվում են մի կետում: Այդ կետով անցնող և պրիզմայի հիմքին ուղղահայաց առանցքի նկատմամբ նշված կողմերին համապատասխանող նիստերի վրա ազդող ճնշման ուժերի մոմենտները զրո են: Քանի որ պրիզման պետք է գտնվի հավասարակշռության վիճակում, երրորդ նիստի վրա ազդող ուժը նույնպես պետք է նշված առանցքի

նկատմամբ մտնենտ չունենա, իսկ դա կլինի միայն այն դեպքում, երբ եռանկյան երրորդ կողմի միջնուղղահայացը անցնի առանցքով: Այստեղից էլ պարզ է, որ դիտարկված պրիզմայի հիմք հանդիսացող կամայական եռանկյան բոլոր միջնուղղահայացները հատվում են մեկ կետում, ինչն էլ պահանջվում էր ապացուցել:

Ուսուցման գործընթացում հավասարակշռության պայմանների կիրառմամբ երկրաչափականն պնդումների ապացուցման կոնկրետ կիրառություններ են ներկայացված [1, 208-224; 5, 234-237; 6, 1-8] աշխատանքներում: Մանկավարժական փորձը վեր է հանում սույն մոտեցման ինչպես ուժեղ, այնպես էլ թույլ կողմերը: Որպես ուժեղ կողմ կարելի է համարել պատկերավորությունը, երբ վերացական մաթեմատիկական օբյեկտները փոխարինվում են իդեալականացված, բայց ամեն դեպքում իրականությանն ավելի մոտ ֆիզիկական օբյեկտներով: Ֆիզիկական մոտեցման դեպքում մաթեմատիկական իրողությունը արտահայտվում է ֆիզիկական երևույթով, ինչը ավելի տպավորիչ է դարձնում երկրաչափական պնդումների հիմնավորման գործընթացը: Մաթեմատիկական առաջադրանքների կատարման համար ոչ մաթեմատիկական գաղափարների կիրառումը նախկինում համարում էին քննարկված մոտեցման թույլ կողմ՝ պատճառաբանելով, որ այն պահանջում է հավելյալ գիտելիքներ և հմտություններ ու լրացուցիչ ծանրաբեռնում սովորողին: Ներկայումս ամբողջ աշխարհում ակտիվորեն զարգանում և տարածվում է ՄԹԵՄ ուսուցումը, որի հիմքում դրված է երևույթները համակողմանի և ամբողջական կերպով դիտարկելու մոտեցումը: Համաձայն ՄԹԵՄ մոտեցման՝ կարևոր հարցերն ու խնդիրները պետք է դիտարկել գիտության ոչ մեկ ոլորտի համատեքստում: Այս պատճառով երկրաչափական և առհասարակ մաթեմատիկական պնդումների ֆիզիկական ապացուցման նկատմամբ հետաքրքրությունը կրկին աճել է, և հաշվի առնելով առկա հարուստ տեսական մշակումները՝ արդեն ստեղծվել են բոլոր անհրաժեշտ հիմքերը ուսուցման գործընթացում դրանց լիարժեք կիրառման համար:

Եզրակացություն

Արդի հասարակության պահանջով դպրոցը պետք է ձևավորի ճկուն մտածողություն և տղերանտ հայացքներ կրող քաղաքացի: Անհրաժեշտ է պատրաստել աշխարհում տեղի ունեցող արագ փոփոխություններին պատրաստ շրջանավարտներ: Դեռ ավելին, նրանք պետք է իրականացնեն այդ փոփոխությունները: Այս պատճառով սովորողների ուսուցման ընթացքում պետք է զարգացվի իրերի էական ու ոչ էական կողմերը գանազանելու և երևույթները ամբողջության մեջ տեսնելու կարողություն-

ներ: Նրանք պետք է հասկանան, որ իրական խնդիրների մեծ մասը հնարավոր չէ լիարժեքորեն լուծել մեկ գիտության շրջանակում, և յուրաքանչյուր գիտություն արտահայտում է ամբողջի մի կողմը միայն: Միջառարկայական ինտեգրատիվ ուսուցումը կոչված է այդ տրամաբանության մեջ կրթության իրականացմանը: Սույն աշխատանքում դասակարգելով երկրաչափական պնդումների ֆիզիկական հիմնավորումները՝ ցույց են տրված դրանց բավականին լայն կիրառությունները, առանձնահատկություններն ու ապացուցողական հնարավորությունները: Երկրաչափության և ֆիզիկայի հիմնահարցերի համատեղ ուսուցումը կարևոր է կոնցեպտուալ տեսակետից և կարող է նպաստել դասավանդվող նյութի խորն ու համակողմանի ընկալմանը: Նման մոտեցումների զարգացումը այլ առարկաների ներգրավմամբ հնարավորություն կստեղծի իրականացնել որակյալ ու ոչ ֆորմալ ՍԹԵՄ ուսուցում:

DOI: <https://di.org/10.58726/27382923-ne2024.1-137>

Գրականություն

1. Նիկողոսյան Գ.Ս., Ֆիզիկայի և երկրաչափության միջառարկայական կապերի որոշ դրսևորումների մասին, ՎՊՀ գիտական տեղեկագիր, «ՎԱՌՄ» ՍՊԸ, 2022, հ 1, էջ. 208-224:
2. Балк М.Б., Болтянский В.Г. Геометрия масс, Москва: «Наука», 1987. - 160 с.
3. Коган Б.Ю. Приложение механики в геометрии (серия «Популярные лекции по математике») Москва, «Наука», 1965, 57с.
4. Успенский В.А. Некоторые приложения механики в математике (серия «Популярные лекции по математике») Москва, «Наука», 1958, 50 с.
5. Цатурян А.М., Парсадаян С.М., Манукян В.Ф., Никогосян Г.С. О некоторых математических соотношениях, вытекающих из физических соображений, физика в школе и вузе. Международный сборник научных статей, выпуск 14, Санкт-Петербург 2012, 234-237 с.
6. Hanna, G., Jahnke, H.N. Another approach to proof: Arguments from Physics. Zentralblatt für Didaktik der Mathematik 34, 2002, 1-8 pp. <https://doi.org/10.1007/BF02655687>
7. Levi M. The Mathematical Mechanic, Using Physical Reasoning to Solve Problems, Princeton University Press, New Jersey 08540, 2009, 186 p.
8. Witkowski A. Proof Without Words: An Electrical Proof of the AM-HM Inequality, Mathematics Magazine, 2014, 275 p.

Применение условий равновесия как альтернативный способ доказательства геометрических утверждений

Вардан Манукян

Гагик Никогосян

Резюме

Ключевые слова: механика, математика, междисциплинарные связи, аксиома, теорема, задача, обучение

Статья посвящена механическим подходам к доказательству геометрических утверждений. В данной работе, с целью иллюстрации глубоких связей физики и геометрии, представлены обоснования геометрических утверждений с использованием идей статики. Даны классификации физических обоснований геометрических утверждений, что является основной научно-методической новизной работы.

В первой части работы представлены междисциплинарные связи физики и геометрии и их особенности. Показаны взаимные влияния этих наук в процессе их становления и развития. В следующем разделе представлены примеры доказательных приложений физики в геометрии и проведена их классификация. Инструментарий физических обоснований, принадлежащих к первому типу, в каком-то смысле уже содержит геометрическое утверждение, которое необходимо обосновать. Второй класс включает геометрические утверждения, подкрепленные интуитивными физическими рассуждениями. К третьему классу относятся рассуждения, которые вместо геометрической аксиоматики основаны на применении физических законов и гипотез. Среди трех упомянутых типов доказательная база последнего является наиболее строгой и независимой. В последнем разделе статьи рассмотрены доказательства геометрических утверждений, основанные на применении условий равновесия тел. Представлены возможности применения обсуждаемых подходов в контексте STEM-образования.

Application of Equilibrium Conditions as an Alternative Means of Proving Geometric Statements

*Vardan Manukyan
Gagik Nikoghosyan*

Summary

Key words: *mechanics, mathematics, interdisciplinary connections, axiom, theorem, problem, learning*

The article is devoted to mechanical approaches towards proving geometric statements. In this paper, in order to illustrate the deep connections between physics and geometry, the justifications for geometric statements, using the ideas of statics, is presented. Classifications of physical justifications for geometric statements are given, which is the main scientific and methodological novelty of the paper.

The first part of the work represents interdisciplinary connections between physics and geometry along with their features. In the process of their formation and development, the mutual influence of these sciences is shown. The next section presents examples of demonstrative applications of physics in geometry and their classification. The toolkit of physical justifications belonging to the first type, in a sense, already contains a geometric statement that needs to be justified. The second class includes geometric statements supported by the intuitive physical reasoning. The third class includes reasoning that, instead of geometric axiomatics, is based on the application of physical laws and hypotheses. Among the three types mentioned, the evidence, based on the latter, is the most rigorous and independent. The last section of the article discusses the proof of geometric statements based on the application of equilibrium conditions for bodies. The possibilities of applying the discussed approaches in the context of STEM education are presented.

Ներկայացվել է 29.03.2024 թ.

Գրախոսվել է 16.04.2024 թ.

Ընդունվել է տպագրության 30.05.2024 թ.

Գնահատման մեթոդի կիրառությունը եռանկյունաչափությունում

Ռոբերտ Մուսայեյան

DOI: <https://di.org/10.58726/27382923-ne2024.1-150>

Հանգուցային բառեր. հավասարում, անհավասարում, համակարգ, գնահատական, օրինակ, ապացույց

Նախաբան

